

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ԴՈՒՄԻԿՅԱՆ ԱԼԻՍԱ ՎԱԶԱԳԱՆԻ

**ՀԱՅՈՑ ՀԻՆ ԵՎ ՎԱՂՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ XIX ԴԱՐԻ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ
ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

**Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների դոկտոր
Դանիելյան Է. Լ.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Բարսեղյան Լ. Ա.

պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
Հովհաննիսյան Պ. Հ.

Առաջատար կազմակերպություն՝

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2013 թ. հուլիսի 9-ին, ժամը 14⁰⁰-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ԲՈՅ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013 թ. հունիսի 8-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մուրադյան Հ.Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

XIX դ. ֆրանսիական հայագիտության պատմագիտական ժառանգության համակողմանի ուսումնասիրությունը և հայ պատմագիտության մեջ դրա ներդրման վերհանումը ունի կարևոր գիտական նշանակություն: Ֆրանսիացի հայագետների հետազոտություններում ներառված Հայոց հին և վաղմիջնադարյան պատմության հիմնահարցերը, բովանդակային ընդգրկմամբ զգալիորեն պահպանում են իրենց նշանակությունը և դրանց հետազոտությամբ է պայմանավորված թեմայի արդիականությունը:

Հայաստանի հին և վաղմիջնադարյան պատմության և աշխարհագրության ուսումնասիրության բնագավառներում XIX դ. Ֆրանսիայում հայագիտության զարգացումն որոշակիորեն պայմանավորված էր, ինչպես ասուրական և Վանի սեպագիր արձանագրությունների վերծանմամբ, նոր հարցադրումների առաջադրմամբ և հետազոտությամբ, այնպես էլ հայկական գրավոր սկզբնաղբյուրների վրա հիմնված պատմագրության ավանդույթներին հետևելով: Ֆրանսիացի հայագետները Հայաստանի պատմաաշխարհագրական հետազոտության խնդրին մոտեցել են որոշակի տեսական հայեցակարգով, որի հիմքում Հայոց պատմական ամբողջական ժառանգության արժևորումն է:

Ֆրանսիացի հայագետներն անդրադարձ են կատարել հայ պատմագիտության առանցքը կազմող հին և վաղ միջնադարյան պատմության և պատմական աշխարհագրության սկզբնաղբյուրային տեղեկություններին, ուստի պատմագիտական ուսումնասիրությունների բնագավառում կարևոր տեղ տրվեց հայկական սկզբնաղբյուրների թարգմանությանը և հետազոտությանը:

Հայ պատմագիտության զարգացման և եվրոպական գիտական շրջանակներին ու հասարակայնությանը Հայաստանի պատմության և պատմական աշխարհագրության հետ ծանոթացման գործում որոշակի ներդրում ունեն XIX դարի ֆրանսիացի հայագետների պատմաաշխարհագրական հետազոտությունները: Նրանք սկզբնաղբյուրների, հետազոտության խնդրում կարևորելով գիտական անաչառությունը, իրենց հետազոտություններում վերականգնել են հայկական որոշ տեղանուններ՝ միաժամանակ փաստելով օտարների կատարած աղճատումները:

Հետագայում նույնպես, հատկապես, Արևմտյան Հայաստանը և Կիլիկյան Հայաստանը զավթած ու Հայոց ցեղասպանությունն իրագործած Թուրքիայի կողմից Հայոց պատմության աղավաղմանը զուգընթաց շարունակական բնույթ ստացավ հայկական տեղանունների այլափոխման և վերացման քաղաքականությունը, ուստի ֆրանսիացի հայագետների մշակած մեթոդներն ունեն, ինչպես պատմական, այնպես էլ արդիական նշանակություն:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊՏԱԿԱՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ:

Ատենախոսության նպատակն է XIX դ. Ֆրանսիայում հայագիտության զարգացման շրջանակներում հին և վաղ միջնադարյան Հայոց պատմության հիմնահարցերի ուսումնասիրության և հայ պատմագրության համար դրանց արծարծման նշանակության լուսաբանումը: Այդ նպատակով մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

- Ֆրանսիական հայագիտության XIX դ. զարգացման ուղղությունը՝ հայկական միջնադարյան սկզբնաղբյուրների թարգմանությունների, դրանց մեկնությունների և հետազոտությունների ու, մեթոդաբանորեն հայ պատմագիտության ավանդույթների հիման վրա:

- Ֆրանսիական հայագիտական հետազոտություններում արծարծված Հայոց հին և վաղմիջնադարյան պատմության ու պատմական աշխարհագրության, քաղաքակրթական ու հոգևոր ոլորտները ներառող դրույթները:

- Հայ և եվրոպական այլ երկրների պատմագետների հետ մեկտեղ ֆրանսիացի հայագետների ներդրումը հայ պատմագիտության զարգացման և եվրոպական գիտական շրջանակներին ու հասարակայնությանը Հայաստանի պատմության հետ ծանոթացման գործում:

- Ֆրանսիացի հայագետների տեսական վերլուծությունների պատմափիլիսո-

փայլական իմաստավորման խնդրում սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող Հայոց պատմության էթնոհոգևոր հիմքերի արտացոլումը պատմագրության և աստվածաբանության մեջ:

- Հայկազունների տոհմաբանությանը նվիրված հետազոտությունները՝ որոշակի տեսական հայեցակարգով, որի հիմքում Հայոց պատմական ժառանգության արժևորումն է:

- XIX դարում ասուրական և Վանի սեպագիր արձանագրությունների վերծանման հիման վրա եվրոպացի և, մասնավորապես, ֆրանսիացի հայագետների և արևելագետների աշխատություններում՝ *Արմենիա* երկրանվան և *հայ* էթնիկ անվան կապակցությամբ արված մեկնությունները:

- Հին Հայաստանի հյուսիսային նահանգների աշխարհագրության, իսկ հետագայում օտար տերությունների միջև երկրի բաժանավածության պայմաններում վարչաքաղաքական պատկերի վերափոխությունների հետևանքով հայկական տեղանունների աղավաղման մասին ֆրանսիացի հայագետների մոտեցումները:

- Ֆրանսիական հայագիտության մոտեցումները Հայաստանում քրիստոնեության ընդունման և տարածման, ինչպես նաև հայ գրերի ստեղծման հանգամանքների մասին:

- Ֆրանսիացի ճանապարհորդների ու միսիոներների հուշագրություններում Հայաստանի և հայերի քաղաքական, տնտեսական և հոգևոր մշակույթի ու պատմության մասին տեղեկությունները, որոնք քաղաքակրթական միջ են կրում:

ԱՆԵՆԱԽՈՒՄՈՒԹՅԱՆ ՍԵՌՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ: Ատենախոսությունը շարադրված է հայ և օտար սկզբնաղբյուրների, ու թեմային վերաբերող ֆրանսիացի հետազոտողների աշխատությունների և համապատասխան այլ գրականության համադիր քննության, ներկայացված փաստերի պատմաքննական և պատմահամեմատական վերլուծության սկզբունքի կիրառմամբ: Եզրահանգումները կատարված են փաստական նյութերի հետազոտության հիման վրա:

ԱՆԵՆԱԽՈՒՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԵՐՁԱՆԱԿՆԵՐԸ: Ատենախոսությունը ընդգրկում է հնագույն ժամանակներից մինչև վաղ միջնադարի ժամանակաշրջանը՝ ներկայացնելով Հայոց պատմության նախաքրիստոնեական և վաղ քրիստոնեական դարաշրջանները:

ԱՆԵՆԱԽՈՒՄՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅՅՈՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Ատենախոսության մեջ քննության առնված խնդիրներն ամբողջությամբ մեկ աշխատանքի շրջանակներում առաջին անգամ են ուսումնասիրության առարկա դառնում:

Հայ պատմագրության մեջ հին և միջնադարյան պատմության հարցերը քննարկելիս՝ բազմիցս անդրադարձ է կատարվել XIX դ. ֆրանսիացի հայագետների աշխատություններին: Ատենախոսության գիտական նորույթն է XIX դ. ֆրանսիական հայագիտական աշխատություններում հայ պատմագրության որոշակի հիմնահարցերին հայեցակարգային մոտեցումների հետազոտությունը, որոնք վերաբերում են հայ ժողովրդի ազգաբանության, Հայաստանի պատմության և պատմական աշխարհագրության, քաղաքակրթական և հոգևոր բնագավառներին: Ատենախոսությունում նորովի բացահայտվում են XIX դ. ֆրանսիացի հայագետների աշխատություններում արտացոլված պատմագիտական հետևյալ հիմնադրույթները.

Ա. Հայոց հին և վաղմիջնադարյան պատմության ու պատմական աշխարհագրության ճանաչողական ու հոգևոր ոլորտները ներառող հայ պատմագիտության ավանդույթներին հետևելը:

Բ. Հայոց հին պատմության սկզբնաղբյուրային փաստերի և V դարում գերակայող գաղափարների իրական պատկերի հիման վրա Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոցի»-ի նկատմամբ «գերքննադատության» ժխտումը:

Գ. Հայոց ազգաբանության՝ Հայկազունների, տոհմաբանության ավանդության սկզբնաղբյուրային նշանակությունը:

Դ. Հայաստանի, մասնավորապես, նրա հյուսիսային՝ Տայք, Գուգարք երկրամասերին անդրադարձը, ըստ սեպագիր, հին հունական և հայկական վաղմիջնադարյան սկզբնաղբյուրների, որն արդիական է ներկայումս որոշ օտար հեղինակների կողմից

Հայոց պատմության և պատմական աշխարհագրության հարցերի խեղաթյուրումների դեմ պայքարում:

Ե. Ասուրական և Վանի սեպագիր արձանագրությունների վերծանմամբ *Արմենիա* երկրանվան և *հայ* էթնիկ անվան կապակցությամբ մեկնությունների կարևորությունը Վանի թագավորության (Ուրարտու), որպես Հայոց պետականության անբախտելի մասի պատմության ուսումնասիրության գործում:

Ձ. Հայոց հին և վաղմիջնադարյան պատմական ժառանգության արժևորումը՝ հայեցակարգային մոտեցմամբ:

Գիտականի հետ մեկտեղ ատենախոսությունն ունի նաև քաղաքական և գործնական նշանակություն: Ուստի XIX դ. ֆրանսիացի հայագետների մոտեցումները կարևոր նշանակություն ունեն այդ կեղծարարությունները և տեղանվանական այլափոխումները բացահայտելիս և հայկական տեղանունների վերականգնման մեթոդաբանությունը կիրառելիս:

XIX դարի ֆրանսիական հայագիտության հայ պատմագրության մեջ ներդրման հարցերի անաչառ ուսումնասիրությունը և կատարված հետևություններն արդիական են և ունեն գործնական նշանակություն: Ատենախոսությունում արծարծված դրույթները և արված եզրակացությունները կարող են օգտագործվել Հայոց պատմության դասնթացներում և մասնագիտական ձեռնարկների ու դասագրքերի պատմագրությամբ նվիրված բաժիններում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ: Ատենախոսությունը քննարկվել և հրատարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հին դարերի պատմության բաժնի կողմից:

Ուսումնասիրության հիմնական խնդիրները լուսաբանվել են հեղինակի հրատարակած գիտական 7 հոդվածներում, հանրապետական և միջազգային գիտաժողովներում ընթերցած գեկուցումներում:

ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍԻՏՈՒՄԸ (ԱՐՔՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՎՆԱԿՆԵՐԻ ՏԵՄՈՒԹՅՈՒՆ): Սույն ատենախոսության ուսումնասիրության աղբյուր են հանդիսացել անտիկ և հայկական վաղմիջնադարյան սկզբնաղբյուրները, որոնք XIX դ. ֆրանսիացի հայագետների աշխատությունների հիմքն են կազմել: Ֆրանսիացի հայագետները Միսիթարյան միաբանության գիտակրթական գործունեության¹ միջոցով ծանոթանալով հայ ոսկեդարյան գրական-մշակութային ավանդույթներին, զբաղվեցին հայկական սկզբնաղբյուրների թարգմանությամբ և հետազոտությամբ, թողնելով հարուստ պատմագիտական ժառանգություն:

Հայ պատմիչների (Մովսես Խորենացի², Կորյուն, Ագաթանգեղոս, Եղիշե, Փավստոս Բուզանդ, Ղազար Փարպեցի, Եզնիկ Կողբացի, Ջենոբ Գլակ (Հովհան Մամիկոնյան)³, Մովսես Կաղանկատվացի⁴, Թովմա Արծրունի, Հովհաննես Դրասխանակերտցի⁵, Կիրակոս

¹ Հ. Յարութին վրդ. Պզտիկեան, Միսիթարի և միսիթարեանների նպաստը հայ մշակույթին, Ե., 2003, Հ. Վարդան եպս. Աշքարյան, Միսիթարյանները հայ մշակույթի ջահակիր, -ՊԲՀ, 2000, № 3, էջ 10-14):

² Le Vaillant de **Florival P. E.**, Moïse de Khorène Histoire de l'Arménie, Venise, 1841. Mémoire sur l'époque de la composition de la Géographie attribuée à Moïse de Khoren (տե՛ս **Saint-Martin M. J.**, Mémoire historique et géographique sur l'Arménie, t. II, Paris, 1819, էջ 301-394). Géographie de Moïse de Corène d'après Ptolémée, texte Arménien, traduit en français par le **P. Arsen Soukkry** Mekhitariste, Venise, 1881. **Հովհաննիսյան Պ.**, Մովսես Խորենացի. Սատենագիտություն, Ե., 2013, էջ 28-30:

³ Collection des historiens anciens et modernes de l'Arménie publiée en français sous les auspices de son excellence Nubar-Pacha (Ministre des affaires étrangères de S. A. le vice-roi d'Égypte) et avec le concours des membres de l'Académie Arménienne de Saint-Lazare de Venise et des principaux arménistes français et étrangers par **V. Langlois**, Première période-historiens Grecs et Syriens traduits anciennement en arménien, Paris, 1867, t. I; Collection des historiens anciens et modernes de l'Arménie ... par **V. Langlois**, Paris, t. II, 1869.

⁴ Collection d'historiens arméniens, Th. Ardzrouni, X^e s., Histoire des Ardzrouni; Arakel, de Tauriz, XVII^e s., Livre d'histoires; Johannès de Dzar, XVII^e s., Histoire de l'Aghovanie; traduits par **M. Brosset**, t. I, St.-Petersbourg, 1874.

⁵ Histoire d'Arménie par le patriarche Jean VI dit Jean Catholocos, traduite de l'arménien en français par **M. J. Saint-Martin**, ouvrage posthume, Paris, 1841.

Գանձակեցի, Ուխտանես⁶, Ստեփանոս Օրբելյան⁷) երկերի ֆրանսերեն թարգմանություններն առաջիններից էին օտար լեզուներով թարգմանվող հայկական սկզբնաղբյուրների շարքում:

Հիմնվելով Սիբայել Չամչյանցի⁸, Ղուկաս Ինճիճյանի⁹, Ղևոնդ Ալիշանի¹⁰, Հովհաննես Շահխաթունյանցի¹¹ ուսումնասիրությունների վրա՝ XIX դ. ֆրանսիացի հայագետները զգալիորեն անդրադարձել են հին և միջնադարյան Հայոց պատմության և պատմական աշխարհագրության սկզբնաղբյուրային տեղեկություններին:

Անտուան-ժան Սեն-Մարտենը, Լը Վայան դը Ֆլորիվալը, Մարի-Ֆելիստե Բրոսեն, Վիկտոր Լանգլուան, Էդուարդ Դյուլորիեն և այլքը հայ միջնադարյան պատմիչների բնագրերի ֆրանսերեն թարգմանությունների իրենց մեկնություններում անդրադարձել են հայագիտության համար կարևոր նշանակություն ունեցող հարցերին՝ հայկական և օտար սկզբնաղբյուրների համադրությամբ որոշակի ներդրում կատարելով հայագիտության զարգացման գործում:

Սույն թեմայի շրջանակներում հետազոտվող հին և վաղմիջնադարյան հիմնահարցերի վերաբերյալ հայ պատմագրությունում (Ղ. Ինճիճյան¹², Հ. Տաշյան¹³, Լեո¹⁴, Ն. Աղոնց¹⁵, Գր. Ղափանցյան¹⁶, Լ. Մելիքսեթ-Քեկ¹⁷, Խ. Թորոսյան¹⁸, Պ. Մուրադյան¹⁹, Ա. Տեր-Ղևոնդյան²⁰, Բ. Զուլպյան²¹, Բ. Հարությունյան²², Ա. Դուլիսանյան²³, Է. Դանի-

⁶ Deux historiens arméniens: Kiracos de Gantzac, Histoire d'Arménie, Oukthanès d'Ourha, Histoire en trois parties, traduits par M. Brosset, 1^{re} Livraison, St.-Petersbourg, 1870.

⁷ De la vie et des écrits d'Etienne Orpélian, archevêque de Siounie (տե՛ս **Saint-Martin M. J.**, Mémoire historique et géographique sur l'Arménie, t. II, Paris, 1819, p. 1-300), Histoire de la Siounie par Stépannos Orbelian, traduite de l'arménien par **M. Brosset**, St.-Petersbourg, 1864.

⁸ **Չամչյանց Ս.**, Պատմութիւն Հայոց, հ. Ա-Գ, Վենետիկ, 1784-1786:

⁹ **Ինճիճյան Ղ.**, Ստորագրութիւն հին Հայաստանեայց Սեծ Հայք, Վենետիկ, 1822: Նույնի, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի՝ Ասիոյ, Երոպիոյ, Ափրիկոյ և Ամերիկոյ, մասն Ա, հ. Ա, ի Վենետիկ, 1806, Նույնի, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. Ա-Գ, Վենետիկ, 1835:

¹⁰ **Ալիշան Ղ.**, Վասն պարունակական կամ Փոքր Թուականացն Հայոց, Բազմավէպ, 1848, № 17, էջ 261-264: Նույնի՝ «Յաղագս Մովսիսի Խորոնեցոյ Դ անուանեալ գրոյն պատմութեան», «Բազմավէպ», 1851, № 5, էջ 69-75, Նույնի՝ «Յուշիկը հայրենեաց Հայոց, հ. Ա, ի Ա. Ղազար Վենետիկոյ, 1869:

¹¹ **Շահխաթունյանց Հ.**, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ զաւառացն Վրարատայ, հ. I և II, ի Ս. Կաթողիկէ Էջմիածին, 1842: Էջմիածնի մատենադարանի առաջին ձեռագրացոցակը կազմել է Հ. Շահխաթունյանցը և հրատարակել Մարի Բրոսեն 1840 թ. (տե՛ս Ռ. Իշխանյան, Գրախոսություն. «Ցուցակ ձեռագրաց». - «Լրաբեր» հաս. գիտ., 1966, № 11, էջ 101):

¹² **Ինճիճյան Ղ.**, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. Գ, Վենետիկ, 1835:

¹³ **Տաշյան Հ. Յ.**, Փորձ մը լեզուի Վանեան բեւեռագրութեանց, - Հանդես ամսօրեայ, Վիեննա, 1899, № 1: Նույնի՝ Սկզբնաղբյուրները Եդեսիոյ եկեղեցոյն եւ Աբգարու գրոյցը. - «Հանդես ամսօրեայ», 1889, № 3, № 4:

¹⁴ **Լեո**, Վանի թագաւորութիւնը (Ուրարտու), Թիֆլիս, 1915, նույնի՝ Հայոց պատմություն, երկերի ժողովածու, հ. 1, Ե., 1966:

¹⁵ **Adontz N.**, Histoire d'Arménie, Les origines du X^e siècle au VI^e (av. J. C.), Paris, 1946; Адонц Н., Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971.

¹⁶ **Ղափանցյան Գր.**, Ուրարտուի պատմությունը, Ե., 1940:

¹⁷ Վրաց արքայուհիները Հայաստանի մասին, **Մելիքսեթ-Քեկ Լ. Ս.**, հ. Ա, Ե., 1934:

¹⁸ **Թորոսյան Խ.**, «Թագակիրների պատմությունն ու զովաբանությունը» որպես Ձաքարյան Հայաստանի ու Ձաքարյանների պատմության սկզբնաղբյուր, Ե., 1992:

¹⁹ Վրաց ժամանակագրություն (1207-1318 թթ.), թարգմանությունը հին վրացերենից, առաջաբանը և ծանոթագրությունները **Պարույր Մուրադյանի**, Ե., 1971:

²⁰ **Тер-Гевондян А.**, Армения и Арабский халифат, Ереван, 1977.

²¹ **Զուլպյան Մ. Կ.**, Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, Գիրք Ա, Զարգացական պատմություն, Ե., 1990:

²² **Հարությունյան Բ. Հ.**, Սեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգը ըստ «Աշխարհացոյց»-ի, մաս Ա, (Արևմտյան և հարավային աշխարհներ), Ե., 2001, Նույնի՝ «Աշխարհացոյց»-ը և չորս Հայքերի խնդիրը, Ե., 1997:

ելյան²⁴ և ուրիշներ) որոշակի անդրադարձ է կատարվել ֆրանսիացի հայագետների աշխատություններին:

Հայոց պատմության հին և միջնադարյան հարցերի ուսումնասիրության խնդրում ֆրանսիացի հայագետներն իրենց աշխատություններում հատկապես անդրադարձել են Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկին: Վ. Լանգլուան բարձր գնահատելով Պատմահոր գիտական ժառանգությունը և նրան անվանելով *Հայ Չերոդոտոս* (Hérodote arménien), նշել է, որ նա «միշտ վեր էր իր ժամանակներում իշխող գաղափարներից, իր դարի նախապաշարունուքներից և նա շատ մեծ քայլ է կատարել իր հայրենիքի պատմության ուսումնասիրության գործում»²⁵: Պատմահոր երկի առնչությամբ դրսևորվող քննադատությունը նա բացատրել է V դարում գերակայող գաղափարների իրական պատկերի և գաղափարական սկզբունքների անտեսմամբ²⁶:

Սեն-Մարտենը և, հատկապես, Վ. Լանգլուան՝ կրոնական գոյաբանության տեսակետից Մովսես Խորենացու՝ հայ ազգի ծագման մասին հայեցակարգի ուսումնասիրությունը պայմանավորել են աստվածաշնչյան և հայկական ավանդական սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող պատկերացումներից բխող տեղեկությունների համադրումով, հատկապես ուշադրություն դարձնելով Հայաստանի պատմաաշխարհագրական միջավայրը բնութագրող տեղեկություններին: Հայ միջնադարյան պատմագրությունում դիտարկելով կրոնական և աշխարհիկ մոտեցումների հարաբերակցության հարցը, Վ. Լանգլուան նշել է, որ, հայ աշխարհիկ գրականությունը, այնուամենայնիվ, շատ ավելի հարուստ է, քան Ասիայի այլ քրիստոնյա ազգությունների գրավոր ժառանգությունը²⁷: Գ. Շրումֆը բարձր գնահատելով է. Դյուլորիեի ներդրումը եվրոպայում հայագիտության զարգացման գործում, կարևորել է Հայոց պատմության քաղաքակրթական արժևորման նշանակությունը և ազգապահպան նպատակով ուսումնասիրության անհրաժեշտությունը²⁸: Ատենախոսությունում կարևորվում է ֆրանսիացի հետազոտողների՝ իրենց կատարած հայ միջնադարյան պատմիչների երկերի թարգմանությունների մեկնություններում պատմաաշխարհագրական մեթոդով մոտեցումը սկզբնաղբյուրային տեղեկություններին: Հայոց ամբողջական պատմական ժառանգության արժևորման հայեցակարգով են նրանք մոտեցել Հայաստանի պատմաաշխարհագրական հետազոտությանը, անդրադառնալով հին ժամանակներից Հայաստանի պատմությանը և ամբողջական տարածքի աշխարհագրությանը, իսկ վաղ միջնադարից՝ պարսկա-բյուզանդական, ու XVI-XVII դարերում պարսկա-թուրքական բաժանումներին, և XIX դ. սկզբներից Ռուսական կայսրության առաջխաղացմամբ²⁹, Արևելյան Հայաստանի վարչա-քաղաքական պատկերի վերափոխությանը:

Հայ պատմագիտության զարգացման և եվրոպական գիտական շրջանակներին ու հասարակայնությանը Հայաստանի պատմության և պատմական աշխարհագրության հետ ծանոթացման գործում որոշակի ներդրում ունեն XIX դարի ֆրանսիացի հայագետների պատմաաշխարհագրական հետազոտությունները, որոնց հիմքում են հայ միջնադարյան սկզբնաղբյուրների իրենց կատարած ֆրանսերեն թարգմանությունները և դրանց մեկնությունները, ինչպես նաև XVIII-XIX դդ. հայ պատմաբանների աշխատությունները: Սեն-Մարտենը Հայաստանի ամբողջական տարածքը ներկայացնող

²³ Մուրադյան Պ., Ակադեմիկոս Սարի Բրոսե, Ե., 2002, էջ 3, 7; Դուլուսյան Ա., Մարի Ֆելիսիտե Բրոսեն հայագետ, Ե., 2002, էջ 14:

²⁴ Даниелян Э. Л., Историко-географические комментарии М. Броссе к его перевод. армянских источников, – Գիտական աշխատություններ, Վ. Բյոլոսովի անվ. պետական լեզվաբանական համալսարան, հաս. գիտ., պրակ առաջին, Ե., 2002:

²⁵ Langlois V., Etude sur les sources de l’Histoire d’Arménie de Moïse de Khoren, tiré du Bulletin, t. III, Paris, 1861, p. 300, 367.

²⁶ Նույն տեղում, էջ 310:

²⁷ Collection des historiens ..., h. I, էջ v-vi.

²⁸ Շրումֆ Գ. Ա., Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յարեւմտոս (ԺԴ-ԺԾ դար), թրգմ. լրց. Գ. Զարբհանալեան, Վենետիկ, 1895, էջ 150:

²⁹ Collection d’historiens arméniens..., h. I, էջ 236, ծան. 1; Deux historiens arméniens..., էջ 99, ծան. 3:

սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը կատարել է աշխարհագրական և պատմական տեղեկությունների համադրության մեթոդաբանությամբ³⁰: Անդրադառնալով Սեծ Հայքի 15 նահանգների գավառների պատմաաշխարհագրական բնութագրին՝ ֆրանսիացի հետազոտողներն իրենց ուշադրությունը կենտրոնացրել են տեղանունների ստուգաբանությանը, որպես հիմք ընդունելով Սովսես Խորենացու (V դար) հաղորդած տեղեկությունները: Պատմաաշխարհագրական ընդհանուր տեղեկությունների վերլուծության հետ մեկտեղ Սեն-Մարտենը, Մ. Բրոսեն, Վ. Լանգլուան առանձին դեպքերում մանրամասնել են որոշ տեղանունների թե՛ տեղադրությանը, և թե՛ դրանց ստուգաբանությանը վերաբերող իրենց բնութագրերը: Սեն-Մարտենը հայկական սկզբնաղբյուրների հիման վրա վերականգնել է որոշ տեղանուններ՝ միաժամանակ ցույց տալով օտարների կատարած աղծառոււմները:

Ատենախոսությունում ուսումնասիրված են հին Հայաստանի պատմության որոշ հարցեր՝ հիմնվելով XIX դ. արևելագիտական ուսումնասիրություններում կատարված եզրակացական, ասուրական և բաբելոնյան աղբյուրների վերծանումների և մեկնությունների վրա³¹: Հայ պատմագիտության ավանդույթներին հետևող ֆրանսիացի հայագետները սեպագիր արձանագրությունների նյութերի համադրումով նոր մոտեցումներ էին դրսևորում³²:

Սեն Մարտենը դեռևս XIX դ. 20-ական թթ. նախաձեռնել էր Հայաստանում սեպագիր արձանագրությունների հայտնաբերման գործը՝ հիմք ընդունելով Պատմահոր տեղեկությունները վիմագիր արձանագրությունների վերաբերյալ³³: Վանում սեպագիր արձանագրությունների հայտնաբերումից հետո ֆրանսիացի արևելագետները և հայագետները իրենց աշխատություններում սկսում են առանձնակի ուշադրություն դարձնել, ինչպես իրենք էին կոչում՝ Վանի կամ բիայնական սեպագիր արձանագրությունների վերծանումների և լեզվի խնդրին: Հայաստանին առնչվող XIX դարի եվրոպական և, մասնավորապես, ֆրանսիական արևելագետների սեպագիր արձանագրությունների վերծանումներում *Արմենիա* երկրանվան և *հայ* էթնիկ անվան մեկնությունը կարևոր ներդրում էր Վանի թագավորության, որպես Հայոց պատմության անբակտեյի մասի ուսումնասիրության գործում:

Ֆրանսիական հայագիտության մեջ ազգաբանության հետ կապված հարցերը քննարկելիս պատմակրոնական մոտեցում է ցուցաբերվել, հիմնվելով հին ավանդույթների, Աստվածաշնչի և Սովսես Խորենացու տեղեկությունների վրա³⁴: Ատենախոսությունում ներկայացված են Մ. Բրոսեի մեկնությունները հայկական սկզբնաղբյուրներում քրիստոնեությանը վերաբերող հարցերի կապակցությամբ: Մ. Բրոսեն հայ պատմիչների երկերի թարգմանությունների մեկնություններում կարևորել է I դարից առաքելական քարոզության, ինչպես նաև 301 թ. հայերի կողմից քրիստոնեության պետականորեն ընդունման խնդիրները:

Հայոց հին և միջնադարյան պատմագիտական, պատմաաշխարհագրական, հոգևոր և քաղաքակրթական հիմնախնդիրների ուսումնասիրությանը նվիրված ֆրանսիացի հայագետների թարգմանական և հետազոտական ժառանգությունը³⁵ մեծ

³⁰ Saint-Martin M. J., Mémoire historique et géographique sur l'Arménie, t. I, Paris, 1818.

³¹ Sauley F. de, Recherches analytiques sur les inscriptions cunéiformes du système Médiéque. - Journal Asiatique, Aout-Septembre, 1849, Layard H., Discoveries in the ruins of Ninveh and Babylon, London, 1853, Brugsch H., Histoire d'Égypte dès les premiers temps de son existence jusqu'à nos jours, Egypte sous les rois indigènes de Ména jusqu'à Ramses II, I^{re} partie, Leipzig, 1859, Oppert J., Expédition scientifique en Mésopotamie, Paris, 1863. Riancy H. de, Le Monde Ancien: Histoire du monde, d'Adam à Notre-Seigneur Jésus-Christ, t. 2, Paris, 1865.

³² Tournébeze Fr., Histoire politique et religieuse de l'Arménie, Paris, 1900.

³³ Սովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Ե., 1991, էջ 54:

³⁴ Langlois V., Mémoire sur les origines de la culture des lettres en Arménie, Revue de l'Orient et de l'Algérie et des colonies, XIV (juillet à décembre), Paris, 1862.

³⁵ Դրա մասն են կազմում դրամագիտության ասպարեզում մեծ աշխատանք կատարած Մ. Բրոսեի, Վ. Լանգլուայի և Է. Բաբելոնի աշխատությունները, որոնք որպես հատուկ ուսումնասիրության բնագավառ, հայ դրամագետների ուշադրության կենտրոնում են (**Մուշեղյան Խ.**, Հայաստանի դրամական զանգեղը,

արժեք է ներկայացնում հայ պատմագրության համար:

ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ԿՈՌՈՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 168 էջ:

ԵՏՐԱԾՈՒԹՅՈՒՆՈՒՄ հիմնավորված է թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ներկայացված է ատենախոսության գիտական նորույթը, տրվել է հիմնախնդրին վերաբերող սկզբնաղբյուրների ու առկա գրականության տեսությունը:

Առաջին գլուխը՝ «ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԺՈՒԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՖՐԱՆՍԻԱՑԻ ՀԱՅՈՒԹՅԱՆԵՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ», բաղկացած է չորս ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ «Հայ պատմագրական ժառանգության արժևորումը Արևելքի պատմության ուսումնասիրության խնդրում», ներկայացված է XIX դարի ֆրանսիացի հայագետների երկերում հայ պատմագրական ժառանգության արժևորմամբ հայ գրականության նշանակության կարևորումը Արևելքի երկրների պատմության հետազոտման խնդրում: Հայոց պատմությունը լուսաբանող սկզբնաղբյուրները գնահատելիս՝ Սեն Մարտենը հայկական գրական ժառանգության հարստությունը համեմատելով այլ երկրների հետ, նշել է, որ այն կարող է ծառայել Ասիայի տարեգրություններում եղած նշանակալի բացը լրացնելուն³⁶: Է. Դյուլորիեն նշել է, որ հայ գրականությունը «հարուստ է պատմական երկերով և քրիստոնյա Արևելքի ամենագիտական արտահայտությունն է»³⁷: Վ. Լանգլուան ուշադրություն է դարձրել դեռևս հին ժամանակներում գրական հուշարձանների պահպանության խնդրին կարևորելով Պատմահոր տեղեկությունները Նինվեի, Սինոպի, Սօբինի և Եղեսիայի³⁸ դիվանների, Դարանաղի գավառի Անի ամրոցում պահվող գրքերի մասին³⁹, նշելով, որ Հայաստանում կային արխիվներ և գրադարաններ: Գրելով XIX դ. եվրոպայում հայ գրականության հանդեպ աճող հետաքրքրության մասին⁴⁰, նա, միևնույն ժամանակ անդրադարձել է հայ պատմիչների կրոնական և աշխարհիկ մտտեցումների հարաբերակցության հարցին⁴¹: կարևորելով նրանց աշխատությունների պատմագիտական արժեքը:

Երկրորդ ենթագլխում՝ «Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի արժևորումը ֆրանսիացի հայագետների երկերում», ներկայացված են Հայոց հին և միջնադարյան պատմության ուսումնասիրության խնդրում պատմաաշխարհագրական, քաղաքական պատմության և հոգևոր-մշակութային առումով Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ին նվիրված Սեն Մարտենի, Վիկտոր Լանգլուայի, Մարի Բրոսեի, Էդուարդ Դյուլորիեի և այլոց հետազոտությունները:

Մ. Բրոսեն նշել է, որ ենթադրվում է, թե եղել է նաև «Պատմութիւն Հայոց»-ի 4-րդ

Ե., 1973, էջ 85-122, **Nercessian Y. T.**, Armenian Coins and Their values, Armenian Numismatic Society, Special Publication N 8, Los Angeles, 1995, p. 10, 15 և այլուք):

³⁶ **Saint-Martin M. J.**, նշվ. աշխ., հ. I, էջ 3-4:

³⁷ **Dulaurier E.**, Les Arméniens en Autriche, en Russie et en Turquie. La société arménienne au XIX^e siècle, sa situation politique, religieuse et littéraire. - Revue des Deux-Mondes, 1854, p. 213.

³⁸ Սեն-Մարտենը և Վ. Լանգլուան անդրադարձել են Աբգար թագավորի նախածեռնությանը Սօբինից Եղեսիա դիվանի տեղափոխման տեղեկությանը: Պատմահայրը գրել է. «Աբգար արքայ Հայոց» (Մովսես Խորենացի, էջ 153): Եղեսիայի մասին Սեն-Մարտենը նշել է. «Համաձայն հայերի, այն Հայաստանի մայրաքաղաքն էր 14-55 թթ.: Աբգարի թագավորության ընթացքում, որին նրանք համարում են որպես իրենց թագավոր...» (**Saint-Martin M. J.**, նշվ. աշխ., հ. I, էջ 158: Լանգլուան նշել է. «...Կարճ ժամանակում Եղեսիան, հատկապես քրիստոնեության տարածման դարաշրջանում, դարձավ գիտության շտեմարան...»: (**Langlois V.**, Mémoire sur les origines..., էջ 222):

³⁹ **Langlois V.**, Le trésor des chartes d'Arménie ou cartulaire de la chancellerie royale des Roupéniens, Venise, 1863, p. 1.

⁴⁰ Collection des historiens ..., հ. I, էջ V-VI. Հմմտ. **Շրումպֆ Գ. Ա.**, նշվ. աշխ., էջ 105:

⁴¹ Նույն տեղում, էջ V-VI. Հմմտ. Collection d'historiens arméniens..., էջ XXIX:

գիրքը⁴², որը ժամանակագրորեն ընդգրկել է մինչև 474 թ.⁴³:

XIX դարի ֆրանսիացի հայագետների մեծագույն մասը Մովսես Խորենացուն համարել է V դարի պատմիչ⁴⁴: Պատմահոր երկի նկատմամբ հատկապես XIX դ. կեսերից «գերքննադատության» դրսևորումները⁴⁵ Վ. Լանգլուան բացատրել է քննադատների անբարեխղճությամբ, որ չեն փորձել համեմատել նրա շարադրանքը թե՛ հույն ու լատին հեղինակների երկերում եղած հիշատակությունների և թե՛ իր ժամանակակից Ղազար Փարպեցու երկի հետ⁴⁶: Նա ուշադրություն է դարձրել այն փաստին, որ Չայոց պատմության որոշ հարցերում V դարի պատմիչներն իրենց երկերում սինկրետիկ մեթոդի կիրառմամբ հենվում էին տարբեր պատմական սկզբնաղբյուրների և Աստվածաշնչից եկող կրոնագաղափարական ընկալումների համադրման վրա⁴⁷, որը որոշակի հիմքեր էր տալիս XIX դարի ֆրանսիական հայագիտական դպրոցին տեսական վերլուծություններ կատարելիս:

Երրորդ ենթագլխում՝ «Ֆրանսիացի հայագետների մոտեցումը Չայկազունների տոհմաբանության սկզբնավորման ավանդությանը», ներկայացված է Արևելքի քրիստոնյա ազգերի և, մասնավորապես, հայերի ծագումնաբանության ուսումնասիրությունը սինկրետիկ ընկալմամբ: Սեն-Մարտենը իր աշխատությունում զգալի ուշադրություն դարձնելով այդ խնդրին, բավականին մանրամասն անդրադարձել է Չայաստանի պատմաաշխարհագրական միջավայրի համադրությանը Սուրբ Գրքի որոշ հաղորդումներին⁴⁸: Նա Արմենիա (Չայաստան) անվան կապակցությամբ գրելով «այն հայտնի չի եղել հրեաներին», քանզի նրանք հիշատակել են *Արարատը*⁴⁹, որը Չայաստանում միշտ գործածվել է նահանգ նշանակությամբ, իսկ «Աստվածաշնչում՝ միայն այն լեռնաշղթայի առումով որտեղ Նոյի տապանն է կանգ առել»⁵⁰:

Մեկնաբանելով Արամի մասին Պատմահոր պահպանած տեղեկությունները՝ Սեն-Մարտենը նշել է, որ Չայկի որդուց՝ Արամայակից⁵¹ սերողներից հինգերորդը՝ Արամը իր թագավորության ժամանակ այնքան նշանավորվեց, որ օտար ժողովուրդները Չայկյանների (Haïganienne) ազգի բնակեցրած երկիրը անվանեցին *Արմենիա*: Մ. Բրոսեն, ինչպես և ժամանակին Սեն-Մարտենը, հիմնվելով Պատմահոր հաղորդման վրա⁵², նշել է, որ Չայոց աշխարհը *Արմենիա* են անվանել հատկապես օտարները⁵³: Սեն-Մարտենը անհավանական է համարել Ստրաբոնի (մ.թ.ա. 64/63 – մ.թ. 24 թթ.) հաղորդած հունական առասպելը⁵⁴ Արմենիա երկրանվան ծագման մասին կապված արգոնավորղներից մեկի Արմենոսի անվան հետ⁵⁵, և դրանից առանձին է դիտարկել Արամի մասին պատմական ավանդությունը:

Չորրորդ ենթագլխում՝ «Չայկյան Արամին վերագրված չորս Չայքերի մասին տեղեկությունը Սեն Մարտենի մեկնությամբ», ներկայացված է Չայաստանի պատմաաշ-

⁴² Չմմտ. Ալիշան Ղ., «Յաղագս Մովսիսի Խորոնեցույ Ռ անուանեալ գրոյն պատմութեան», «Բագմավեպ», 1851, № 5, էջ 69, տես նաև: Մաթևոսյան Ա. Ս., Մովսես Խորենացու «Չայոց պատմության» չորրորդ գրքի հարցը, - ՊԲՀ, 1991, № 2, էջ 204:

⁴³ Deux historiens arméniens..., էջ 3, ծան. 1:

⁴⁴ Klaproth M. J., Voyage au Mont Caucase et en Géorgie, t. II, Paris, 1823, p. 292, com. 2. Saint-Martin M. J., նշվ. աշխ., հ. II, էջ 301-302, Langlois V., Collection des historiens..., հ. II, էջ 47-48. Deux historiens arméniens..., էջ 3, ծան. 1:

⁴⁵ Մանրամասն տես՝ Մուշեղյան Ա., Մովսես Խորենացու դարը, Ե., 2007:

⁴⁶ Langlois V., Etude sur les sources ..., էջ 305-306:

⁴⁷ Նույն տեղում, էջ 310:

⁴⁸ Saint-Martin M. J., նշվ. աշխ., հ. I, էջ 258:

⁴⁹ The Septuagint Version of the Old Testament, with an English translation, London, 1884, Genesis VIII.4, Biblia Sacra Vulgatae, Gen. 8, 4.)

⁵⁰ Saint-Martin M. J., նշվ. աշխ., հ. I, էջ 260:

⁵¹ Նույն տեղում, էջ 282, 407:

⁵² Մովսես Խորենացի, էջ 42:

⁵³ Deux historiens arméniens..., էջ 214, ծան 6:

⁵⁴ Saint-Martin M. J., նշվ. աշխ., հ. I, էջ 280-281:

⁵⁵ The Geography of Strabo with an English transl. by H. L. Jones, vol. V, London, 1954, XI 4.7-8.

խարհագրական նկարագրությունը: Սեն Մարտենը գրել է. «Հայաստանի բաժանումը Սեն, Փոքր, Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ շատ հին է և այն հիշատակում են գրեթե բոլոր հույն պատմիչները: Հայերն այն հասցնում են մինչև իրենց ամենահին արքաներից մեկը՝ Արամը, որը մեծ նվաճումներ կատարեց Փոքր Ասիայում և իր հայրենիքի անունը տվեց բոլոր այն երկրներին, որոնք նա նվաճեց»⁵⁶: Սեն-Մարտենը անդրադարձել է Կապադոկիայում և Փոքր Ասիայի այլ մասերում Արամի գործունեությանը վերաբերող Պատմահոր («Պռոտին Արմենիա, որ թարգմանի Առաջին Հայք»⁵⁷) և Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդումներին⁵⁸:

Պատմագրության մեջ պարզվել է, որ Հայկյան Արամի գործունեության կապակցությամբ Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ում, ինչպես նաև «Աշխարհացոյց»-ում չորս Հայքերի մասին տեղեկությունը հետագա խմբագրության արդյունք է⁵⁹, ուստի պետք է ենթադրել, որ Դրասխանակերտցին և Սամուել Անեցին գործ են ունեցել Պատմահոր հաղորդած տեղեկության խմբագրված տարբերակի հետ:

Հայ պատմիչների երկերում *չորս Հայքերի* մասին տեղեկությունը Սեն-Մարտենը դիտարկել է Փոքր Հայքում և Սեն Հայքի արևմտյան մասում հայ Արշակունիների թագավորության անկումից (387 թ.) հետո և, հատկապես, VI դարում տեղի ունեցած Բյուզանդական կայսրության վարչաքաղաքական բաժանումների տեսանկյունից: Դե-տևաբար Սեն Մարտենը ընդունելով հնագույն ժամանակներում Հայկյան Արամի արևմուտքում ծավալած գործունեության մասին հաղորդումները, միևնույն ժամանակ, *չորս Հայքերի* ստեղծումը դիտարկել է VI դարի բաժանումներին առումով:

Երկրորդ գույնը՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱՆՈՒՄԱՐՄԱՆԻ ԳԻՆՆԱԳՐՈՒՄԻ ՀԻՄՆՈՒՄՆԵՐԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅՎԱԳԵՏՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅԱՄՔ», բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Հայաստանի պատմաաշխարհագրության ժառանգության ուսումնասիրության և արժևորման մեթոդաբանական հիմքը XIX դարի ֆրանսիացի հայագետների երկերում», ներկայացվում են հայ պատմագիտության զարգացման և եվրոպական գիտական շրջանակներին ու հասարակայնությանը Հայաստանի պատմության և պատմական աշխարհագրության հետ ծանոթացման գործում խոշոր ներդրում կատարած ֆրանսիացի հայագետների պատմաաշխարհագրական բնույթի հետազոտությունները⁶⁰, որոնց հիմքում են հայ միջնադարյան սկզբնաղբյուրների իրենց կատարած ֆրանսերեն թարգմանությունների մեկնությունները, ինչպես նաև XVIII-XIX դդ. հայ պատմաբանների աշխատությունները: Հայաստանի ամբողջական պատմական տարածքը ներկայացնող սկզբնաղբյուրների հետազոտությունը Սեն Մարտենը կատարել է աշխարհագրական և պատմական տեղեկությունների համադրման մեթոդաբանությամբ:

«Աշխարհացոյց»-ը, որպես սկզբնաղբյուր օգտագործելով, Սեն Մարտենը վերջինիս մեջ դիտարկելով V դ. չհամապատասխանող տվյալներ, այն համարեց IX դ. կամ X դ. հեղինակի գործ: Ուստի իր աշխատության երկրորդ հատորի նախաբանը նա վերնագրել է «Մովսես Խորենացուն վերագրվող Աշխարհագրության ստեղծման դարաշրջանի մասին ուսումնասիրություն»⁶¹: «Աշխարհացոյց»-ի հեղինակի ժամանակաշրջանի առումով Սեն-Մարտենի հայտնած տեսակետն իրավացիորեն քննադատեց Ղ.

⁵⁶ Saint-Martin M. J., նշվ. աշխ., հ. I, էջ 17: Սեն Մարտենը նշել է Հայկյան Արամի գահակալությունը մ.թ.ա.1827-1769 թթ. (տես Saint-Martin M. J., նշվ. աշխ., էջ 407), ըստ Մ. Չամչյանցի «Պատմութիւն Հայոց»-ի (հ. Գ, 46-47-րդ, 1786, ժամանակագրութիւն, էջ 26):

⁵⁷ Մովսէս Խորենացի, էջ 46:

⁵⁸ Ըստ Ֆրանսիայում գտնվող մի ձեռագրի (հմմտ. հետագայում կատարված հրատարակության հետ՝ **Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցու** Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 18):

⁵⁹ Մովսես Խորենացի, թարգմ., ներածություն և ծան. Ստ. Մալխայանցի, Ե., 1968, էջ 329-330, ծան. 38: **Մուշեղյան Ա.**, նշվ. աշխ., էջ 139: Համաձայնվելով պատմագրության մեջ Մովսես Խորենացուն «Աշխարհացոյց»-ի հեղինակ համարող կարծիքին՝ Բ. Հարությունյանը նշել է, որ «Աշխարհացոյց»-ում սկզբնապես չորս Հայքերը էլին կարող հիշատակվել» (**Հարությունյան Բ. Զ.**, «Աշխարհացոյց»-ը և չորս Հայքերի խնդիրը, Ե., 1997):

⁶⁰ Նույն տեղում, էջ ix: **Langlois V.**, Collection des historiens anciens et modernes de l'Arménie, Paris, 1867, p. V.

⁶¹ **Saint-Martin M. J.**, նշվ. աշխ., հ. II, էջ 315-317:

Ինճիճյանը⁶²:

Սեն-Մարտենը իր աշխատության I հատորը սկսում է XIX դ. սկզբներին Մեծ Հայքի տարածքի՝ օտար տերությունների միջև բաժանված լինելու իրավիճակի դիտարկմամբ⁶³: Ղեկավարվելով հայկական տարածքները պատմականորեն ամբողջության մեջ ներկայացնելու մեթոդով՝ նա ներկայացրել է Մեծ Հայքի 15 աշխարհները⁶⁴: Սեն-Մարտենը կատարել է հայկական որոշ տեղանունների վերականգնման միաժամանակ փաստելով օտարների կատարած աղճատումները: Այսպիսի մոտեցումը արդիական նշանակություն ունի ներկայիս թուրք պատմագրության մեջ կեղծարարությունները բացահայտելիս և հայկական տեղանունների վերականգնման մեթոդաբանությունը կիրառելիս⁶⁵:

Երկրորդ ենթագլխում՝ «Մեծ Հայքի հյուսիսային սահմանային գոտու ուսումնասիրության խնդիրը XIX դ. ֆրանսիական հայագիտական և արևելագիտական հետազոտություններում», ներկայացված են ֆրանսիացի հայագետների մոտեցումները Տայքի, Գուգարաց բղեշխության պատմական աշխարհագրությանը և Հայաստանի վրացիների կողմից տրված «Սոմխիթ» անվանման ծագմանը: Սեն-Մարտենը և Բրոսեն Հայաստանի պատմաքաղաքական աշխարհագրությանն անդրադառնալիս կարևորել են այն իրողությունը, որ Տայքը հին ժամանակներից եղել է Մեծ Հայքի նահանգներից մեկը:

Ասորեստանյան սեպագիր արձանագրությունների Daiaeni-ն համադրվում է քիյանական (արարատյան՝ ուրարտական) սեպագիր աղբյուրների Diau(e)he-ի հետ: Պատմագրության մեջ արտահայտված կարծիքը, թե քիյանական սեպագիր արձանագրությունների *m* անձի դետերմինատիվը՝ *ցեղի* դետերմինատիվ է⁶⁶ բավարար հիմքեր չունի: Daiaeni, Diau(e)he և Ταουκοι անվանումների կապակցությամբ հատկապես արդի վրաց պատմագրությունում աղավաղվում է Հայաստանի հյուսիսային տարածքների էթնո-աշխարհագրական և քաղաքական պատմությունը՝ հայկական այդ տարածքներն անհիմն կերպով ներկայացնելով որպես «պատմական Վրաստանի հարավ-արևմտյան շրջաններ»⁶⁷: Այնինչ, ըստ հին հունական և հայկական վաղմիջնադարյան սկզբնաղբյուրների, Վիրքը տեղադրված էր Հայաստանից հյուսիս և սահմանը նրանց միջև անցնում էր Կուր գետով: ^mDiau(e)=he վերծանվում է «Դիաու(ե)-յան/ ական/ցի», քանի որ -he(-hi)-ն, ոչ թե ցեղանուն կազմող, այլ պատկանելություն ցույց տվող (ածակա-նակերտ) ածանց է: Նմանապես՝ հայկական սկզբնաղբյուրներում Տայքի հետ մեկտեղ հիշատակվող *տայեցիք* հասկացությունը ոչ թե ցեղանուն է, այլ՝ Տայք նահանգի հայ բնակչության տեղանվանական անվանածևր:

Սեն-Մարտենը ուշադրություն դարձնելով *բղեշխ*⁶⁸ տերմինին, նշել է, որ Արշակունի և Սասանյան արքաների օրոք Մեծ Հայքի Գուգարք նահանգը վստահված էր *բղեճաշխ* կամ *բղեշխ* կոչվող զինվորական իրամանատարներից, որոնք պետք է այն պաշտպանեին վրացիների և հյուսիսի ժողովուրդների ներխուժումներից: «Այս պաշտոնյաները կոչվում էին տարբեր ձևերով՝ Գուգարաց կամ Վրաց զինվորական

⁶² **Ինճիճյան Ղ.**, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. Գ, Կենտիկ, 1835, էջ 304-314:

⁶³ Սեն Մարտենի աշխատությունը ավարտվում է 1812 թվականով (**Saint-Martin M. J.**, նշվ. աշխ., հ. I, էջ ix):

⁶⁴ Նույն տեղում, էջ 16: Հաջորդ տասնամյակներում Բրոսեն ևս զգալի անդրադարձ կատարեց սկզբնաղբյուրների այն տեղեկություններին, որոնք կարևորություն են ներկայացնում Հայաստանի պատմության լուսաբանման համար:

⁶⁵ **Չուլայան Մ. Կ.**, Հայոց պատմության խեղաթուրումը արդի թուրք պատմագիտության մեջ (հին և միջին դարեր), Ե., 1995: **Sahakyan L.**, Turkification of the Toponyms in the Ottoman Empire and the Republic of Turkey, Montreal, 2011, էջ 27-48:

⁶⁶ **Арутюнян Н. В.**, Топонимика Урарту, Е., 1985, с. 70-71, Նույնի՝ **Копуце ...**, էջ 410, 503):

⁶⁷ Հմմտ. У.КН, с. 424, տես նաև՝ **Меликшвили Г. А.**, Днаухи, էջ 26-42: Նույնի, К истории древней Грузии, с. 176.

⁶⁸ **Կրկյաշարյան Ս. Ս.**, Բղեշխությունների առաջացումը Հայաստանում, ՊԲՀ, 1966, № 4, էջ 259, 262:

հրամանատարներ՝ Բդեաշխ Գուգարացուց կամ Բդեշխ Վրաց»⁶⁹: Գուգարաց բդեշխ տիտղոսի կողքին «բդեշխ վրաց» տիտղոսաձևը առաջացել է հայ Արշակունիների թագավորության անկումից հետո⁷⁰: Իսկ այդ նշանակում է, որ «բդեշխ վրաց» տիտղոսաձևի առաջացումը Գուգարաց բդեշխ տիտղոսի կողքին ոչ թե էթնո-տարածքային, այլ Սասանյանների վարած վարչաքաղաքական բաժանումների հետևանք էր:

Վրաց սկզբնաղբյուրներում Հայաստանին տրված *Սոմխիթ* անունը վերաբերում է Հայաստանի տարածքին⁷¹: Սակայն վրաց արդի պատմագրությունում գերիշխում է *Սոմխիթին* տարբեր «էթնո-քաղաքական» իմաստներ տալու մոտեցումը⁷²: Մեծ Հայքի Գուգարք նահանգի հյուսիս-արևելյան տարածքը «վրացականացնելու» նպատակով⁷³: «Սոմխիթ» անվանման կապակցությամբ ատենախոսը կարևորել է Մ. Բրոսեի տեսակետը, որի համաձայն դրա ծագումը սերում է հայերին վրացների կողմից տված «սոմնեխի» անվան «սամխտեթի»՝ «հարավ» նշանակությամբ բառից⁷⁴: «Սոմխիթ» (և նրա «Սոմխեթ» անվանաձևը) իր ընդգրկմամբ սկզբնաղբյուրներում կիրառվել է Կուրից հյուսիս տեղադրված Վիրքի էթնո-աշխարհագրական միջավայրից հարավ գտնվող Հայոց տարածքի կապակցությամբ:

Երրորդ գլուխը՝ «ՍՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ ՎԱՍԻ ՍԵՊԱԳԻՐ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՖՐԱՆՍԻՎԱՆ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ», բաղկացած է երեք ենթագլուխից: *Առաջին ենթագլուխում՝ «Հին Հայաստանի մասին սեպագիր արձանագրությունների վկայությունները XIX դ. ֆրանսիացի արևելագետների լուսաբանմամբ»,* անդրադարձ է կատարվել XIX դ. ֆրանսիական արևելագիտության մեջ Հայաստանի հին դարերի պատմության ուսումնասիրությանը: Առավել կարևորվում է Բրոսեի ներդրումը, որը մի կողմից օգտագործել է եգիպտական, ասուրական և քաղդեական (իմա՝ բաբելոնյան) հիերոգլիֆ և սեպագիր արձանագրությունների տեղեկությունները⁷⁵, իսկ մյուս կողմից թարգմանել և ուսումնասիրել մի շարք հայկական միջնադարյան սկզբնաղբյուրներ: Ըստ Բրոսեի՝ եգիպտական հիերոգլիֆ արձանագրություններում Միջագետքի հյուսիսում հիշատակվող Ռեմենե (Remene) երկրանունը և Ռեմենեն (Remenen) ազգը պետք է Արմենիայի և արմենների եգիպտական անվանումը լինել (nom égyptien de l'Arménie et des Arméniens), քանի որ *Արմենիա* (Armenia) դասական անվանաձևի ծագումը շատ վաղ ժամանակներից է գալիս⁷⁶: Մինչև XIX դ. 80-ական թթ. ֆրանսիական արևելագիտության և հայագիտության մեջ գերակայում էր *Ռեմենեի* Հայաստանի հետ նույնացման կարծիքը, այնուհետև՝ Լիբանանում տեղադրելու տեսակետը հայտնվեց⁷⁷: Ռեմենեի՝ Արմենիա-Հայաստանի հետ նույնացումը հայեցակարգային նշանակություն է ունեցել ֆրանսիացի հայագետների համար, ինչը պահպանում է իր կարևորությունը խնդրի հետագա ուսումնասիրության

⁶⁹ Saint-Martin M. J., նշվ. աշխ., հ. I, էջ 79:

⁷⁰ Մելքոնյան Ա., Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Ե., 2003, էջ 42:

⁷¹ Թորոսյան Խ., «Թագակիրների պատմությունն ու զովաբանությունը» որպես Ջաբարյան Հայաստանի ու Ջաբարյանների պատմության սկզբնաղբյուր, Ե., 1992, էջ 120-122, 161):

⁷² Տե՛ս Թորոսյան X., Топоним “Сомхити” в грузинских первоисточниках, Е., 2003, с. 24-35.

⁷³ Бердзенишвили Н., Джавахашвили И., Джанашиа С., История Грузии, под ред. С. Джанашиа, Тбилиси, 1946, с. 6.

⁷⁴ Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'au XIX^e siècles traduite du géorgien par M. Brosset, I^{re} partie, St.-Petersbourg, 1849, p. 15, com. 5.

⁷⁵ Նրա ուսումնասիրության ոլորտում են եղել Ժ.-Ֆր. Շամպոլիոնի (1790-1832 թթ.), Ժ. Օպերտի (1825-1905 թթ.), Ֆր. Լենորմանի (1837-1883 թթ.) և այլոց աշխատությունները, որոնցում արծարծվել են նաև հին Հայաստանի պատմության որոշ հարցեր:

⁷⁶ Brosset M., Sur l'histoire ancienne de l'Arménie, d'après les textes hiéroglyphiques et cunéiformes. – Bulletin de l'Académie Impériale des sciences de St-Petersbourg, 1871, t. seizième, p. 334. Հմմտ. Lenormant Fr., Manuel de l'histoire ancienne de l'Orient, Paris, 1869, t. I, p. 374, 379, 385-409; Riancey H. de, նշվ. աշխ., էջ 302; Tournebize Fr., նշվ. աշխ., էջ 15, 16; Brugsch H., նշվ. աշխ., էջ 4, 104:

⁷⁷ Guieysson P., Inscription historique de Sétî I^{er}, Recueil de travaux relatifs à la philologie et à l'archéologie égyptiennes et assyriennes, publié sous la direction de G. Maspero, t. 11, Paris, 1889, p. 56: Հմմտ. Thutmose III: A New Biography. Eric H. Cline, David O'Connor, editors, Michigan, 2005.

ասպարեզում:

ժ. Օպերտը նշել է. «Urarta-ն բառացի արտահայտում է Արարատ անունը, որը բիր-լիական տեքստերում նշանակում է Արմենիա»⁷⁸: Է. Կավենյակը *Ուրարտուի թագավորությունը* հիշատակել է որպես հայկական թագավորություն (le royaume arménien d'Ourartou (Ararat))⁷⁹: Ֆր. Լենորմանը նշել է, որ մ.թ.ա. X դ. ասորեստանյան գործերը արշավանքներ են կատարել դեպի *Չայաստանի լեռներ* (dans les montagnes de l'Arménie)⁸⁰: Բրուսի հիշատակած արևելագետներն ասուրական արձանագրությունները վերծանելիս Վանի թագավորության արքաներին հիշատակել են հայկական էթնիկ բնութագրմամբ տարբեր անուններով (Amika l'Arménien, Arménien Sardur, Ursa⁸¹, roi d'Arménie):

Սեն-Մարտենը գրել է, որ համաձայն Մովսես Խորենացու, Պարույր Սկայորդին Չայկի հաջորդներից 36-րդն էր, այսինքն՝ նրան Չայկազուն է նշել⁸²: Ֆ. Սոլսին անդրադարձել է Չայաստանի հիշատակությանը «Արմինա» (Armina) ձևով⁸³, որն առկա է Բեհիսթունի սեպագիր եռալեզու արձանագրությունում (Armina/Arminiya=Uraštu)⁸⁴:

Երկրորդ ենթազույգը՝ «Մովսես Խորենացու «Պատմութիւն Չայոց»-ի նշանակու-թյունը Վանի սեպագիր արձանագրությունների հայտնաբերման գործում և դրանց լեզվի խնդիրը XIX դարի ֆրանսիական արևելագիտության մեջ», ներկայացնում է ֆրանսիացի հետազոտողների Չայաստանի հին դարերի պատմությանը նվիրված հետազոտություններում Մովսես Խորենացու հաղորդած տվյալների հետ մեկտեղ սեպագիր աղբյուրների թարգմանություններից ստացվող տեղեկությունների խնդիրը: Սեն Մարտենը դեռևս XIX դ. 20-ական թթ. նախածեղեն էր Չայաստանում սեպագիր արձանագրությունների հայտնաբերման գործը՝ հիմք ընդունելով Պատմահոր տեղեկությունները վիճաբար արձանագրությունների մասին: Վան քաղաքի շինարարությանը, ջրանցքի կառուցման և այլ գործերին⁸⁵ վերաբերող նրա պահպանած տեղեկություններին ֆրանսիացի հետազոտողներից հատկապես անդրադարձել են Մ. Բրուսեն, Մ. Լենորմանը, ժ. Օպերտը⁸⁶:

Վանում, ինչպես նաև Արևելյան Չայաստանում սեպագիր արձանագրությունների հայտնաբերումից հետո որոշ արևելագետներ և հայագետներ XIX դ. երկրորդ կեսին իրենց աշխատություններում առանձնակի ուշադրություն են սկսում դարձնել, սեպագիր արձանագրությունների վերծանումների և լեզվի (ինչպես իրենք էին կոչում՝ Վանի Vanique) բացահայտման խնդիրին, երբ դեռևս պարզաբանված չէր դրա քերականությունը, իսկ բառապաշարն էլ կարգավորված չէր: ժ. Օպերտը Վանի սեպա-

⁷⁸Oppert J., Expédition ..., liv. I, ch. I, note 2, p. 18. Layard H., նշվ. աշխ., էջ 403:

⁷⁹Cavaignac E., Histoire générale de l'antiquité, Paris, 1946, p. 155.

⁸⁰Lenormant Fr., Manuel de l'histoire ancienne..., h. II, էջ 66, 67, հմմտ. Fr. Tournebize, Histoire politique et religieuse de l'Arménie, Paris, 1900, p. 16-17. Անգլիացի հետազոտող Յ. Ռաուլինսոնը (1810-1895 թթ.) *Արամա* թագավորի մասին հիշատակություն պարունակող մի ասուրական արձանագրությունում *Արարատ* անվան ընթերցումը համգվածորեն նույնացրել է *Արմենիային*: Նա անդրադարձել է ասորեստանցիների՝ «դեպի *Արմենիա*» կատարած ներխուժմանը և Artseni գետանունը նույնացնելով *Արածանիի* հետ, որպես երկրա-նուն հիշատակվող *Արարատը* նույնացրել է *Մեծ Չայքի* (Great Armenia) հետ, իսկ թագավորին հիշատակել է «Չայաստանի Սարդուրի» անունով («Asiduri (Sarduri - Ա.Ղ.) of Armenia» (Rawlinson H. C., A Commentary on the Cuneiform Inscriptions of Babylonia and Assyria, London, 1850, p. 40, 44, 75): Վանում և դրա շրջակայքում հայտնաբերված արձանագրությունների կապակցությամբ Յ. Ռաուլինսոնը նշել է. «Այս արձանագրություն-ները են կոչում են հայկական: Դրանք գրված են նույն նշաններով, որոնք օգտագործվում էին Ասորեստանում, սակայն օգտագործված են այլ լեզվով...»:

⁸¹Յմմտ. Oppert J., նշվ. աշխ., գ. III, գլ. V, էջ 354:

⁸²Saint-Martin M. J., նշվ. աշխ., h. I, էջ 283:

⁸³Saulcy F. de, Recherches analytiques sur les inscriptions cunéiformes du système Médiéque. -Journal Asiatique, Août-Septembre, 1849, t. XIV, p. 97; հմմտ. Brosset M., նշվ. աշխ., էջ 339:

⁸⁴Lecoq P., Les inscriptions de la Perse achéménide, Gallimard, 1997, p. 139, 246.

⁸⁵Մովսես Խորենացի, էջ 50-54:

⁸⁶Brosset M., նշվ. աշխ., էջ 337; Lenormant Fr., նշվ. աշխ., h. II, էջ 76-77; Oppert J., նշվ. աշխ., գ. II, գլ. V, էջ 185:

գիր արձանագրությունների լեզուն կոչել է *արմենիակ* (arméniaque)⁸⁷: Նա նշել է, որ Բեհիսթունյան արձանագրությունում հիշատակվող Ուրաշտուն (Urastu) Հայաստանն (Arménie) է բարբելական ձևով⁸⁸:

Ֆր. Լենորմանը Վանի թագավորության արքաներին նախ համարում էր հայկական, սակայն այնուհետև նա հայտնեց դրան հակասող մեկ այլ կարծիք, իբրև թե Հայաստանի սեպագիր արձանագրությունների լեզուն «վրացերենի նմանություն» է ցուցաբերում⁸⁹: Այնինչ, վրացերենի հետ ազգակից կապը ժամանակին մերժել էր Մ. Նիկոլսկին՝ *վանյան* (բիայնական) արձանագրությունների լեզվի վերաբերյալ գրել է. «Որոշ եզակի՝ վրացերենի հետ նմանակվող դեպքեր, ազգակից կապ հաստատելու իրավունք չեն տալիս»⁹⁰:

XX դ. գերիշխեց վանյան սեպագրերի լեզուն որպես *ուրարտերեն* համարվող տեսակետը, ըստ որի այն «սերտ ազգակցական կապեր ուներ խուռերեն լեզվի հետ»⁹¹: Իսկ «ուրարտերենի և հայերենի միջև եղած ընդհանրությունների խնդրի» կապակցությամբ եզրակացվեց, որ «այստեղ ազգակցություն չկա, լեզուները տարբեր լեզվական ընտանիքների են պատկանում»⁹²: 1988 թ. Գ. Ջահուկյանը անդրադառնալով խուռերենի և ուրարտերենի խնդրին՝ գրել է, որ «առավելագույնս կարող է խոսք լինել հեռավոր ցեղակցության մասին»⁹³, իսկ XX դ. վերջին՝ ուրարտական արձանագրությունների ներածական բանաձևերի վերլուծության հիման վրա եզրակացրեց, որ դրանք հայկական բնույթ ունեն, քանզի դրանց բառապաշարը հիմնականում հայկական է և քերականական առանձնահատկությունները հնարավոր է բացատրել նախագրաբարյան շրջանի քերականական բառապաշարով⁹⁴:

Չորրորդ գլուխը «ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅԱԳԵՏՆԵՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ» բաղկացած է չորս ենթագլխից: Առաջին ենթագլուխը՝ «Հայաստանի աստվածաշնչյան ընկալումը ֆրանսիացի հայագետների պատմակրոնական պատմությանցումներում», ներկայացնում է XVIII-XIX դդ. Ֆրանսիայում աստվածաշնչյան մեկնությունների լույսի ներքո Հայաստանի պատմահոգևոր իմաստավորումը: Աստվածաբան Դոմ Ազուստին Կալմեն գրել է. «Հայաստանը... եղել է մարդկության բնօրրանը»⁹⁵, նկատի ունենալով, ինչպես ինքն է նշել

⁸⁷Oppert J., նշվ. աշխ., էջ 70, հմտ. «*Արմենիակ*, որն արիական կամ հնդեվրոպական բարբառ է, որը ծառայել է Հայաստանի ազգաբնակչությանը (les populations de l'Arménie) մ.թ.ա. IX - VII դարերում» (Lenormant Fr., նշվ. աշխ., h. II, էջ 155-156):

⁸⁸Սոյն տեղում, գ. II, գլ. V, էջ 223:

⁸⁹Lenormant Fr., Lettres Assyriologiques, Paris, 1871, t. I, p. 124-127.

⁹⁰Никольский М. В., Клинообразные надписи ванских царей, открытых в пределах России, Москва, 1893, с. 3. Ա. Դ. Սորդմանը *վանյան* արձանագրությունների լեզուն համարել է հին հայերեր (Mordtmann A. D., Entzifferung und Erklärung der armenischen Keilinschriften von Van und der Umgegend. - Zeitschri. d.d.m.G., Leipzig, 1872, p. 465-696), որը մերժեցին մի շարք հետազոտողներ (Patanoff K., նշվ. աշխ., էջ 431, **Никольский М. В., ук. соч., с. 2**): Ա. Գ. Սեյյը, այնուհետև ֆրանսիացի ասուրագետ Գյույարը փորձեցին ներկայացնել վանյան սեպագիր արձանագրությունների բառապաշարը և քերականության սխեման (Guyard St., Les inscriptions de Van.-Mélange d'assyriologie, 1883, Paris, p. 113-144, **Sayce A. H.**, նշվ. աշխ., էջ 382-383, 389-390): Գ. Սանտալմյանը 1900 թ. ֆրանսերենով լույս տեսած իր աշխատությունում այն տեսակետն էր պաշտպանում, որ վանյան սեպագրերը հայկական ծագում ունեն (Sandalgian J., Les Inscriptions Cunéiformes Urartique, Venise, 1900):

⁹¹Меликшвили Г. А., Урартский язык, Москва, 1964, с. 10-14, Дьяконов И. М., Языки Древней Передней Азии, М., 1967, с. 113-165.

⁹²ՉԺՊ, հ. I, էջ 230-237, 418-419:

⁹³Առաքելյան Բ. Ն., Ջահուկյան Գ. Բ., Սարգսյան Գ. Խ., Ուրարտու-Հայաստան, Ե., 1988, էջ 132, 134:

⁹⁴Ջահուկյան Գ., Ուրարտական արձանագրությունների ներածական բանաձևերի հնարավոր հայկական բնույթի մասին, ՊԲԳ, 2000, № 1, էջ 127-128:

⁹⁵Տես դեռևս XVII դ. Օ. Կալմեի (1672-1757 թթ.) խմբագրությամբ կազմված տեղեկատվական բառարանի չորրորդ հրատարակությունը (Dictionnaire historique, archéologique, philologique, géographique et littéral de la Bible par le Rev. Père dom Augustin Calmet, quatrième édition, revue, corrigée, complétée et actualisée par A. F. Jame, publiée par M. l'abbé Migne, t. I, Paris, 1846, p. 590).

Դրախտի և տապանակիր Արարատ լեռան մասին Օմնոցոց գրքի հաղորդումները⁹⁶: Շ. Կոլֆը Արարատ լեռան կապակցությամբ նշել է. «Արիացիները այն համարում էին, որպես մարդկության սրբազան բնօրրան»⁹⁷: Է. Բորեն համարում էր, որ «հայ ազգն ունի ավանդույթներ, որոնք անկասկած ապացուցում են նրա հին լինելը» և վկայում են «քրիստոնեության դարաշրջանից շատ առաջ փառահեղ՝ Հաբեթի թոռ Թորգոմից սերած արքայատոհմերի կողմից կառավարվելու մասին...»⁹⁸: Վ. Լանգլուան, հիմնվելով Պատմահոր երկի վրա, առաջարկել է Հայաստանի պատմության հետևյալ ժամանակագրական կարգը. 1. Հայաստանի նախնադարյան «էթնո-նահապետական» դարաշրջան, 2. Հին և միջնադարյան ժամանակներ, երբ Հայոց ազգային համախմբվածության շնորհիվ Հայաստանը հարատևեց, 3. Հայերի հարատևումը պայմանավորված նրանց ազգային ներքին կառուցվածքի ամրությամբ⁹⁹: Հին Հայաստանի պատմության, մասնավորապես, ազգաբանության հետ կապված հարցերը քննարկելիս ֆրանսիական հայագիտության մեջ պատմակրոնական մոտեցում է ցուցաբերվել՝ հենվելով ավանդույթների, Աստվածաշնչի և Մովսես Խորենացու տեղեկությունների վրա:

Երկրորդ ենթագլուխը «Ֆրանսիացի հայագետների անդրադարձը Հայաստանում վաղ քրիստոնեական զարգացումների պատմական հանգամանքներին», ներկայացնում է Հայաստանում քրիստոնեության տարածման և հայերի քրիստոնեության ընդունման վերաբերյալ ֆրանսիական հայագիտության մեջ եղած սկզբնաղբյուրային մեկնություններին՝ հիմնված հայ պատմիչների հաղորդումների հետազոտությունների վրա: Մ. Բրոսեն հայ պատմիչների երկերի թարգմանությունների մեկնություններում կարևորել է հայոց ազգային պատմության հետ Լ դարից քրիստոնեության կապված լինելու փաստը: Նա, անդրադառնալով հայերի քրիստոնեության ընդունման խնդրին՝ հիմնվել է Պատմահոր հաղորդած տեղեկությունների վրա¹⁰⁰: Պատմագրության մեջ ուշադրություն է դարձվել, որ Պատմահոր հաղորդումը Եդեսիայի Հայոց արքա Աբգար թագավորի մասին¹⁰¹ հաստատում է ասորի պատմիչ Անանուն Եդեսացին (XII դ. 2-րդ կես - 1234 թ.) գրելով, որ Ալեքսանդր Մեծի զորավար Սելևկոսից սերող Ուշայի թագավորների սերնդի ընդհատվելուց հետո այնտեղ բնակություն հաստատած և հզորացած հայերից մեկը՝ Աբգարը թագավոր հռչակվեց և նա ու նրա սերունդները կոչվեցին Աբգար ու տիրեցին Ուշային ու Միջագետքին¹⁰²: Մ. Բրոսեն նշել է, որ Եդեսիայի հայերը իրենց հայրենակիցներից ավելի վաղ են ընդունել քրիստոնյա հավատը¹⁰³:

Մ. Բրոսեն գտնում է, որ ճիշտ է հայերի կողմից քրիստոնեության ընդունման տարեթիվը համարել 301 թվականը¹⁰⁴: Չեռնադրոսյուն ստանալու նպատակով սբ. Գրիգորի Կեսարիա մեկնելու և դրան հաջորդած իրադարձությունների մասին Մ. Բրոսեն որպես սկզբնաղբյուր է օգտագործել Ազաթանգեղոսի հաղորդումները¹⁰⁵: Մ. Բրոսեն անդրադառնալով «Դաշանց թղթի» խնդրին, այն համարել է XI դ. վերջի կամ

⁹⁶Օմնոց., Բ, 8-10; Ը.4:

⁹⁷Wolff, Charles-Joseph-François (Gal), Recherches sur les Aryas, 1893, p. 128.

⁹⁸Boré E., Le couvent de Saint-Lazare à Venise, ou histoire succincte de l'ordre des Méchitaristes Arméniens; suivie de renseignements sur la langue, la littérature, l'histoire religieuse et la géographie de l'Arménie, Paris, 1837, p. 42.

⁹⁹Langlois V., Mémoire sur les origines..., էջ 200-202.

¹⁰⁰Մովսես Խորենացի, էջ 150-152:

¹⁰¹Մովսես Խորենացի, էջ 154-156: Շահխաթունեանց Հ., նշվ. աշխ. հ. I, էջ 140-145: Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. I և II, ի Ս. Կաթողիկէ Էջմիածնի, 1842: Յ. Տաշեան, Սկզբնաւորութիւնք Եդեսիոյ եկեղեցւոյն եւ Աբգարու գրոյցը. - «Հանդէս ամսօրեայ», 1889, N3, էջ 47-51, № 4, էջ 63-67:

¹⁰²Անանուն Եդեսացի, ժամանակագրություն, թարգմ. բնագրից և առաջ. և ծան. Լ. Հ. Տեր-Պետրոսյանի. - տես Ասորական աղբյուրներ Բ, 12, է., 1982, էջ 195-196:

¹⁰³Histoire de la Sioumie..., էջ 13-14, ծան. 3:

¹⁰⁴Սույուն տեղում, էջ 14, ծան. 3:

¹⁰⁵Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց, էջ 420:

XIII դ. գրված¹⁰⁶: Հետագայում, քննարկելով եղած կարծիքները, Հր. Բարթիկյանը եզրակացրել է, որ «Դաշանց թուղթը» երկու մասից է բաղկացած վաղագույնը վերաբերում է IV դ. 20-ական թթ.¹, իսկ մյուսը՝ XIII դ. առաջին կեսին¹⁰⁷:

Հոգևոր պատմությանը Մ. Բրոսեի անդրադարձի արտահայտություններից է նրա դիտարկումը, որ հայերը բացի էջմիածնի, Աղթամարի և Սսի կաթողիկոսներից ունեին Կոստանդնուպոլսի և Երուսաղեմի պատրիարքներ: Նա նաև հիշատակել է Աստրախանի, Ղրիմի, Թիֆլիսի, *Քարաբաղի* (Quarabagh)¹⁰⁸ և Շամախի (Chamakhi) հինգ հայ առաջնորդների՝ թեմի եպիսկոպոսներին¹⁰⁹:

Հայոց պատմության քրիստոնեության առաջին դարերին վերաբերող Մ. Բրոսեի հայացքները վկայում են հայկական սկզբնաղբյուրների հաղորդումների տեղեկություններին՝ հայագիտության մեջ ընդունված ավանդական դիրքերից մոտեցման մասին:

Երրորդ ենթագլուխը՝ «Հայ գրերի գյուտի և գրականության արժևորումը» ներկայացնում է V-VII դդ. Հայաստանում տեղի ունեցած գրական շարժման հայ ազգի կյանքում պատմական նշանակության բարձր գնահատականը XIX դ. ֆրանսիական հայագիտության մեջ: Սեն Մարտենը այդ երևույթը պայմանավորել է հունական գրականության հայերեն թարգմանությանը և ինքնուրույն գրականության ստեղծմանը, որով հայ ժողովուրդն ընդդիմանում էր պարսից ճնշմանը քաղաքական և գաղափարական ոլորտներում¹¹⁰:

Սեն Մարտենը նշել է, որ V դ. Սահակ-Մեսրոպյան դպրոցի առավել հայտնի աշակերտներից էին Մովսես Խորենացին, ով իր հմայիչ գրելաոճի համար անվանվել է Քերթող, Մամբրե Վերծանողը, Կորյունը, Եղիշեն, Եզնիկ Կողբացին, Դավիթ փիլիսոփան և շատ ուրիշներ¹¹¹: Վ. Լանգլուան բարձր գնահատելով թարգմանիչների կատարած գործը՝ նրանց անվանել է «սուրբ թարգմանիչներ»¹¹²:

Նա նախանաշտոցյան գրերի գոյության առնչությամբ գրել է. «Հնարավոր է, որ հայերը, հակառակ իրենց պատմիչների միանշանակ վկայությունների, հնում ունեցել են այբուբեն, ինչպես մտածել են տալիս, բացի Վանի ժայռին փորագրված հին արձանագրություններից, Փիլոստրատոսի մի պարբերությունը, որի համաձայն՝ Արշակ արքայի օրոք¹¹³ հայերը իրենց լեզվի համար ունեին իրենց պատկանող պատկերային համակարգը»¹¹⁴: Անհրաժեշտ է նշել, որ Վ. Լանգլուան ֆրանսիացի հայագետներից առաջինն էր, որ անդրադարձել է այդ տեղեկությանը¹¹⁵:

Է. Դյուլորիեն բարձր գնահատելով հայերեն լեզուն գիտաքաղաքակրթական առաջընթացի գործուն, գրել է. «Հայերեն լեզուն միշտ մնում է կենդանի և կարծես մի աղբյուր, որտեղից անդադար բխում են բոլոր այն արտահայտությունները, որ գիտությունների կամ քաղաքակրթության առաջընթացը կարող է պահանջել»¹¹⁶:

Չորրորդ ենթագլուխը՝ «Ֆրանսիացի ճանապարհորդների հուշագրություններում հայերի առևտրատնտեսական և արհեստագործական գործունեության գնահատականը»

¹⁰⁶ **Brosset M.**, Rappports sur un voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie, St.-Petersbourg, 1849, p. 45-47: Հմմտ. Վ. Լանգլուան այն համարել է XII կամ XIII դ. գրողի ստեղծագործություն (Collection des historiens..., h. I, էջ 103):

¹⁰⁷ **Բարթիկյան Հր.**, նշվ. աշխ., էջ 65-116:

¹⁰⁸ Բրոսեն այն հիշատակել է Quarabagh ձևով Արցախ անվան հետ մեկտեղ (la province d'Artsakh) (Deux historiens arméniens..., էջ 88, ծան. 5):

¹⁰⁹ Histoire de la Siounie..., էջ 68, ծան. 3:

¹¹⁰ **Saint-Martin M. J.**, նշվ. աշխ., h. I, էջ 7:

¹¹¹ Նույն տողում, 318-319:

¹¹² **Langlois V.**, Mémoire sur les origines..., էջ 200:

¹¹³ **Philostratus.** Life of Apollonius of Tyana, Vol. 1: Books 1-4, Transl. by Christopher P. Jones, Cambr., Mass., London, 2005, p. 135.

¹¹⁴ **Langlois V.**, նշվ. աշխ., էջ 207:

¹¹⁵ Photius. Bibliothque, t. V, 1967, p. 172, 324b 4-11.

¹¹⁶ **Dulaurier E.**, Les Arméniens..., էջ 211:

անդրադարձ է կատարվում XIII-XIX դդ. արևելյան երկրներ ուղևորված ֆրանսիացի ճանապարհորդների (Գիյոմ դե Ռուբրուկ, Ժան Շարդեն, Ժան Բատիստ Տավերնիե, Ժոզեֆ Պիտոն դե Տուրնեֆոր, Ռաֆել դյու Ման, Ամեդե Ժոբեր) հուշագրություններին, որոնք ֆրանսիական պատմագրության մեջ կարևոր տեղ ունեն, միևնույն ժամանակ որոշակի տեղեկություններ պարունակելով հայերի և Հայաստանի մասին: Դրանցում զգալի տեղ են զբաղեցնում «Մետաքսի ճանապարհ»-ով կատարված առևտրում, ինչպես նաև Ֆրանսիայի հետ ծավալված տնտեսական ու մշակութային կապերի ոլորտում հայերի դերի մասին տեղեկությունները¹¹⁷: Իր ճանապարհորդությունը նկարագրելիս Ռուբրուկը Հայաստանը հիշատակել է նաև *Արարատի երկիր* (ըստ Աստվածաշնչի) և Մեծ Հայք անվանումներով¹¹⁸ (ըստ անտիկ և վաղմիջնադարյան հայկական սկզբնաղբյուրների):

Ֆրանսիացի ճանապարհորդները նկարագրել են Հայաստանով անցած իրենց ուղիները և դրանց վրա գտնվող քաղաքները (Վան, Կարին-Էրզրում, Անի, Նախիջևան) և բարձր են գնահատել միջազգային առևտրում հայ առևտրականների ծավալած գործունեությունը և բարոյական կերպարը¹¹⁹:

ԵՅՐԱՎԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ի մի են բերված ատենախոսության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները:

1. XIII դ. ֆրանսիական հայագիտությունը զարգանում էր հայկական միջնադարյան սկզբնաղբյուրների թարգմանությունների, դրանց մեկնությունների և հետազոտությունների ուղղությամբ, հետևելով հայ պատմագիտության ավանդույթներին: Ֆրանսիական հայագիտական հետազոտությունների կենտրոնում էին Հայոց հին և վաղմիջնադարյան պատմության ու պատմական աշխարհագրության, քաղաքակրթական ու հոգևոր ոլորտները ներառող հիմնահարցերը: XVIII-XIX դդ. հայ պատմագետների հետ մեկտեղ ֆրանսիացի և եվրոպական այլ երկրների հայագետները մեծ ներդրում են կատարել հայ պատմագիտության զարգացման և եվրոպական գիտական շրջանակներին ու հասարակայնությանը Հայաստանի պատմության հետ ծանոթացման գործում:

2. Սեն-Մարտենի, Վ. Լանգլուայի, Մ. Բրոսեի, Էդ. Դյուլորեի և այլոց աշխատություններում առանձնապես հետազոտված է Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկը: Հիմնվելով հայ պատմագիտության մեջ ընդունված տեսակետի վրա, նրանք Մովսես Խորենացուն իրավացիորեն համարել են V դարի եղիմակ: Պատմահոր երկի նկատմամբ «գերքննադատությունը» չընդունելով՝ Վ. Լանգլուան այն բացատրել է նրա դարաշրջանի գաղափարների իրական պատկերի, ինչպես նաև հայոց հին պատմության սկզբնաղբյուրային փաստերի անտեսմամբ: Միևնույն ժամանակ, արժևորելով հայկական սկզբնաղբյուրները, Լանգլուան նշել է, որ դրանք առանձնապես են քրիստոնյա Արևելքի ժողովուրդների գրական ժառանգության մեջ:

3. Պատմության հետազոտության կրոնափոխոսկայական քննարկումները XIX դ. մեծագույնս պայմանավորված էին սինկրետիկ մեթոդի կիրառմամբ: Հայոց պատմության էթնոհոգևոր հիմքերի ուսումնասիրությունը պատմագրության և աստվածաբանության մեջ, կարևոր նշանակություն են ունեցել պատմափոխոսկայական իմաստավորման համար, որը որոշակի դեր էր կատարում ֆրանսիացի հայագետների տեսական վերլուծություններում: Սեն-Մարտենը և, հատկապես՝ Վ. Լանգլուան,

¹¹⁷ **Macler Fr.**, L'Épopée Arménienne, Trois Conférences sur l'Arménie faites à la fondation Carol I à Bucarest par Frédéric Macler, Annales du musée Guimet bibliothèque de vulgarisation, t. 49, Paris, 1929, p. 23.

¹¹⁸ **Guillaume de Rubrouck**, Ambassadeur de Saint Louis en Orient, récit de son voyage, traduit de l'original latin et annoté par Louis de Backer, Paris, 1877, p. 281.

¹¹⁹ **Jaubert A.**, Voyage en Arménie et en Perse, dans les années 1805 et 1806, Paris, 1821, p. 110 ; Dictionnaire universel de commerce: contenant tout ce qui concerne le commerce qui se fait dans les quatre parties du monde, Genève, 1742, t. II, p. 547; Voyages de M^e le **Chevalier Chardin** en Perse et autres lieux de l'Orient, Amsterdam, 1711, t. I, p. 8. **Joseph Pitton de Tournefort**, Գլվ. աշխ., էջ 158, 168; **Le P. Raphaël du Mans**, Գլվ. աշխ., էջ 349 և այլն :

կրոնական գոյաբանության տեսակետից Մովսես Խորենացու՝ հայ ազգի ծագման մասին հայեցակարգը դիտարկել են աստվածաշնչյան և հայկական ավանդական պատկերացումներից բխող տեղեկությունների համատեքստում:

4. Ֆրանսիացի հայագետների երկերում Հայկազունների տոհմաբանության մասին հայեցակարգը Հայոց պատմության և պատմական աշխարհագրությանը նվիրված հետազոտությունների հիմքումն էր: Սեն Մարտենը, ընդունելով Հայկյան Արամի արևմուտքում ծավալած գործունեության մասին հայ պատմիչների հաղորդումները, մինևույն ժամանակ, *չորս Հայքերի* տեղօժումը դիտարկել է վաղմիջ-նադարյան բյուզանդական վարչաքաղաքական բաժանումների առումով:

5. Հայաստանի պատմաաշխարհագրական հետազոտության խնդիրն ֆրանսիացի հայագետները մոտեցել են Հայոց պատմական ժառանգության տարածքային ամբողջականության արժևորմամբ: Սեն-Մարտենը և Մ. Բրոսեն այս տեսանկյունով են հետազոտել հին Հայաստանի պատմական աշխարհագրությունը: Անդրադառնալով վաղ միջնադարից՝ պարսկա-բյուզանդական, իսկ XVI-XVII դարերում պարսկա-թուրքական բաժանումներին և XIX դ. սկզբներից Ռուսական կայսրության առաջխաղացմամբ, Արևելյան Հայաստանի վարչաքաղաքական պատկերի վերափոխությանը, նրանք բացահայտել են հայկական տեղանունների աղավաղման փաստը:

6. Սեն-Մարտենը և Մ. Բրոսեն անդրադառնալով Սեօ Հայքի տասնհինգ աշխարհներին (նահանգներ)՝ հատուկ ուշադրություն են դարձրել Տայք և Գուգարք նահանգների պատմաքաղաքական բնութագրին: Տայքի սեպագիր և հունական անվանածների կապակցությամբ որոշ անհիմն մեկնությունները հետևանքով, հատկապես արդի վրաց պատմագրությունում աղավաղվում է Հայաստանի հյուսիսային տարածքների էթնո-աշխարհագրական և քաղաքական պատմությունը՝ հայկական այդ տարածքներն ներկայացվելով որպես «պատմական Վրաստանի հարավ-արևմտյան շրջաններ»: Հայկական սկզբնաղբյուրներում Տայքի հետ մեկտեղ հիշատակվող *տայեցիք* հասկացությունը բնիկ հայ բնակչության տեղանվանական անվանաձևն է (հմմտ. գուգարացիք, մոկացիք, սպերացիք, դարանաղայք, կարնացիք, բասենցիք, շիրակացիք և այլն):

7. Վրաց մատենագրությունում Հայաստանին տրվող «Սոմխիթ» անվանման ծագումը պատմագրության մեջ ենթադրվել է Սուխմե (Արածանիի հովտում) կամ Սամուհա (Բարձր Հայքում) տեղանուններից, իսկ Մարի Բրոսեն առաջացած է համարել հայերին վրացիների կողմից տված «սոմխիթ» անվան «սամխտեթի» (სამხტეთი), «հարավ» նշանակությամբ բառից: «Սոմխիթ»-ը (և նրա «Սոմխեթ» անվանաձևը) իր ընդգրկմամբ սկզբնաղբյուրներում կիրառվել է Կուր գետով անցնող Վիրքի սահմանից հարավ գտնվող տարածքի կապակցությամբ: Ուստի, Սոմխիթ/Սոմխեթ անվանաձևերի կիրառման երկու դեպքում էլ խոսքը Վիրքից հարավ ընկած տարածքի մասին է, թե՛ ամբողջ Հայաստանի և թե՛ նրա հյուսիսային նահանգի Գուգարքի արևելյան գավառների առումով:

8. Հայաստանի հին դարերի պատմությունը ուսումնասիրելիս՝ XIX դարում ասուրական և Վանի սեպագիր արձանագրությունների վերծանման հիման վրա եվրոպացի և, մասնավորապես, ֆրանսիացի արևելագետների աշխատություններում՝ *Արմենիա* երկրանվան և *հայ* էթնիկ անվան կապակցությամբ մեկնությունները կարևոր ներդրում էին Վանի թագավորության (Ուրարտու), որպես Հայոց պետականության անքակտելի մասի պատմության ուսումնասիրության գործում: Վանի թագավորության սեպագիր արձանագրությունների վերծանման և դրանց լեզվի ուսումնասիրության սկզբնավորման ժամանակաշրջանից, հայեցակարգային տարբեր մոտեցումների առկայությամբ, կարևորվել է հայերենի հետ եղած առնչությունների հիմնախարցը:

9. Ի դարում Հայաստանում առաքելական քարոզությամբ քրիստոնեության տարածման և Հայոց Աբգար թագավորի, Մախամաշտոցյան հայ գրերի, 301 թ. քրիստոնեության պետականորեն ընդունման և Մեսրոպ Մաշոցի կատարած հայ գրերի գյուտի մասին, ինչպես նաև հետագա դարերում Արևելք ուղևորված ֆրանսիացի ճանապարհորդների ու միսիոներների հուշագրություններում Հայաստանի և հայերի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին վերաբերող տեղեկությունները

քաղաքակրթական միջ կրելով, ֆրանսիական հայագիտության կարևոր ներդրումների շարքին են պատկանում հայ պատմագրության մեջ:

Ատենախոսության հիմնական դրույթների ներկայացված են հեղինակի հետևյալ հրատարակումներում

1. Հին Հայաստանի մասին հիերոգլիֆ և սեպագիր արձանագրությունների վկայությունները XIX դ. ֆրանսիացի արևելագետների լուսաբանությամբ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների 30-րդ հոբելյանական նստաշրջան, - «Հայոց պատմության հարցեր», 10, 2009, էջ 3-11:
2. Le problème du déchiffrement des inscriptions cunéiformes d'Ararat dans l'arménologie européenne du XIX^e siècle, l'Université linguistique d'Etat V. Brioussov d'Erévan en partenariat avec l'Ambassade de France en Arménie et l'Agence Universitaire de la francophonie, -Le miroir linguistique de l'univers, Actes du colloque international organisé dans le cadre de la Semaine de la francophonie, 2009, p. 180-186:
3. Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկի արժևորումը Վիկտոր Լանգլուայի հետազոտություններում, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, - «Հայոց պատմության հարցեր», 11, 2010, էջ 11-19:
4. Տայքը (Դայանեի/Դիաուխի) սեպագիր և հին հունական ու հայկական վաղ միջնադարյան սկզբնաղբյուրներում, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, - «Հայոց պատմության հարցեր», 12, 2011, էջ 3-21:
5. Հայաստանի վրացիների կողմից տրված «Սոմխիթ» անվանման հարցի շուրջ և XIX դ. ֆրանսիացի հայագետների մոտեցումները, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, - «Հայոց պատմության հարցեր», 13, 2012, էջ 18-32:
6. Evaluation de la littérature de traduction arménienne de l'Age d'or par les arménistes français dans le contexte des relations interculturelles, Université Libre Internationale de Moldova, Institut de recherches philologiques et interculturelles - Francophonie: L'interculturalité à travers la linguistique et la littérature, Numéro 7, vol. 1, 2012, p. 213-219.
7. Մետաքսի ճանապարհի առևտրում հայերի գործունեության արժևորումը XIII-XIX դդ. ֆրանսիացի ճանապարհորդների հուշագրություններում, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, - Հայաստանի քաղաքակրթական ավանդը մետաքսի ճանապարհի պատմության մեջ, 2012, էջ 167-174:

ДУМИКЯН АЛИСА ВАЧАГАНОВНА

ВОПРОСЫ ИСТОРИИ ДРЕВНЕЙ И РАННЕСРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ И
ФРАНЦУЗСКОМ АРМЕНОВЕДЕНИИ XIX ВЕКА

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.05 “Историография, источниковедение”.

Защита состоится 9-го июля 2013 г., в 1400, на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории Национальной Академии Наук РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Данная диссертация посвящена освещению вопросов истории древней и раннесредневековой Армении во французском арменоведении XIX века.

Диссертация состоит из введения, четырех глав, заключения, списка использованных источников и литературы. Во введении аргументируется научная новизна изучаемой проблемы. Далее представляются цели и задачи, затем анализируются источники и литература.

В первой главе – “Вопрос исследования армянского историографического наследия в работах французских арменоведов”- исследуется вопрос оценки армянского историографического наследия во французских арменоведческих исследованиях М. Сен-Мартена, М. Броссе, В. Ланглуа и других, следующих традициям арменоведения конгрегации Мхитаристов в Венеции. Особенностью французского арменоведения было изучение истории Армении наряду с осуществлением собственных переводов армянских источников (Мовсес Хоренаци, Товма Арцруни, Иоанн Драсханакертци, Киракос Гандзакечи, Ухтанес, Степанос Орбеляна и др.) и соответствующих комментариев. Специальное внимание уделяется высокой оценке источниковедческого значения "Истории Армении" Мовсеса Хоренаци в работах французских арменоведов. Предание о происхождении генеалогии Гайкидов представлено в контексте религиозно-философских подходов французских арменоведов. Исследованы также сведения о *четырёх Армениях*, приписываемых деятельности Арама. По данным Сен-Мартена, есть два хронологических слоя в информации об Араме: 1. Гайкидский Арам расширил свою деятельность в ападном направлении, 2. информация о *четырёх Армениях* считается результатом военно-административных делений в VI веке.

Во второй главе - «Вопросы исторической географии Армении в свете интерпретацией французских арменоведов” - исследуются подходы французских арменоведов к историко-территориальной целостности Армении. Согласно армянским средневековым источникам, Тайк издревле являлся одной из провинций Армении. В ассирийских клинописных надписях Daiaeni упоминается в числе *стран Наури*, т.е. областей *страны Наури*. Daiaeni сопоставляется с Diau(e)ne биайнийских (араратских-урартских) клинописных надписей. Высказанное в историографии мнение, что детерминатив лица *m* биайнийских клинописей является детерминативом, указывающим на *племя*, не имеет достаточно оснований. Вследствие некоторых спорных интерпретаций в связи с названиями Daiaeni, Diau(e)ne и Taovcoi, в особенности, в современной грузинской историографии, в общем, искажается этно-географическая и политическая история северных территорий Армении, эти армянские территории безосновательно представляя как “юго-западные области исторической Грузии”

(Иверия). Однако, согласно древнегреческим и раннесредневековым армянским источникам, Иверия (Вирк) была расположена к северу от Армении и граница между ними проходила по реке Кура. ¹⁰Diau(e)he расшифровывается “Диаух/ский/сц”, ибо -he(-hi-) не является суффиксом формирующим этнонимы, а представляет собой суффикс (формирующий прилагательные) указывающий на принадлежность. Таким же образом, упоминаемое в армянских источниках, наряду с Тайком, понятие *тайкцы* представляет собой топонимическую форму названия армянского населения провинции Тайк, как видно из упоминания армянского населения также по названиям других областей и округов Армении: *гугаркцы, мокцы, сперцы, маналийцы, дараналийцы, каринцы, басенцы, ширакцы* и др. Daiaeni и Diau(e)he клинописных надписей (и отождествляемый с ними Ταουσοί греческих источников) являются древнейшими упоминаниями исконно армянской провинции Тайк.

В грузинских источниках Армения упоминается как *Сомхити*. Согласно мнению Мари Броссе, происхождение данного армянам со стороны грузин названия “сомехи”, связано с грузинским словом “самхрети” (6#/D5'+), означающее “юг”. При применении форм названия *Сомхити/Сомхет*, необходимо иметь ввиду, что речь идет об армянской территории к югу от Иверии (южная граница которой к северо-востоку от Армении проходила по р. Кура) т.е. как, в целом, о территории, всей Армении, так и о восточных гаварах ее северной провинции Гугарк.

В третьей главе - “Комментарии клинописных надписей Вана касательно древней Армении во французском арменоведении в свете свидетельств Мовсеса Хоренаци”, представлено исследование древней истории Армении во французском востоковедении. Наиболее весомый вклад внес Броссе, который, с одной стороны использовал египетские, ассирийские и вавилонские, а с другой - сообщения армянских средневековых источники касательно древнего периода. Значение труда Мовсеса Хоренаци в открытие клинописей Вана определяется их местом в историческом наследии Армении. Комментарии к названию страны Армения и армянского этнического названия данные европейскими и в особенности французскими арменоведами на основе расшифровки ассирийской и ванской клинописи, являются важным вкладом в изучении истории Ванского царства (Урарту), как неотъемлемой части истории армянской государственности. Также обращено внимание на исследования (с начала расшифровки и исследования языка клинописных надписей Вана) в связи с соотношением языка клинописных текстов с армянским.

В четвертой главе - “Оценка армянских цивилизационных факторов в работах французских арменоведов” - изучаются методологические подходы французских арменоведов к библейскому восприятию Армении как Араратской земли, а также раннехристианским проявлениям, начиная с апостольской проповеди, и далее обращению в христианство в 301 году, домашноцовским письменам и изобретению армянского алфавита Святым Месропом Маштоцем (405 г. н.э.), в результате которого появилась переводческая (В. Ланглуа называл переводчиков “святыми”; Ла Кроз назвал армянский перевод Библии “царицей переводов») и оригинальная армянская литература. Характерно, что французские путешественники и миссионеры во время путешествий проходили через Армению, обращая внимание на этнографические, экономические и историко-культурные ценности, в особенности - на священную гору Арарат-Масис.

В заключении изложены основные итоги и выводы исследования.

THE QUESTIONS OF HISTORY OF ANCIENT AND EARLY MEDIEVAL ARMENIA
IN FRENCH ARMENOLOGY OF XIX CENTURY

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of
“Historiography and source study” 07.00.05

The defense of the dissertation will be held on 9 July 2013, 14⁰⁰ at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA at the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Ave. 24/4).

SUMMARY

The present dissertation is dedicated to the coverage of issues of the history of ancient and early medieval history of Armenia in the French Armenology of XIX century.

The dissertation consists of an introduction, four chapters, a conclusion and a list of the used sources and literature. The scientific novelty is argued in the introduction. Then the goals and assigned tasks of the dissertation are presented, and sources and literature are analyzed.

In the first chapter - “The question of the Armenian historiographical heritage’s research in the works of the French Armenologists,”- is researched the question of evaluation of the Armenian historiographical heritage in the French Armenological studies of M. Saint-Martin, M. Brosset, V. Langlois and others following the traditions of Armenian studies emanating from the Mekhitarist Congregation in Venice. A specific feature of the French Armenology was the studies of history of Armenia along with realization of their own translation of Armenian sources (Movses Khorenatsi, Thovma Ardzrouni, Jean Catholocos Draskhanakertsi, Kirakos Gandzaketsi, Oukhtanès, Stépannos Orbelian, etc.) and corresponding comments..A special attention is paid to the high assessment of the source value of Movses Khorenatsi’s “History of Armenia” in the works of the French Armenologists. The tradition about the origin of the Haikazun genealogy is presented in the context of their religious-philosophical approaches, as well as the information about *four Armenians* attributed to Aram is researched. According to Saint-Marti, there are two chronological layers in information about Aram: 1. Haikian Aram expanded his activities in west, 2. information about *four Armenians* is considered to be a result of the military-administrative divisions in VI century.

In the second chapter – “The questions of historic geography of Armenia according to interpretations of the French Armenologists”- are researched approaches of the French Armenologists to the historical territorial wholeness of Armenia. According to Armenian medieval sources, since ancient times Taik’ had been one of the provinces of Armenia. Daiaeni is mentioned in Assyrian cuneiform inscriptions among the *Nairi lands*, i.e. the regions of the Nairi. *Diau(e)he* of the Biainian (Araratian-Urartian) cuneiform inscriptions matches with *Daiaeni*. An interpretation of the Biainian cuneiforms’ person determinative *m* in historiography as the determinative indicating *ethnos* does not have enough ground. Because of some arguable interpretations in relation to the names Daiaeni, Diau(e)he and $\tau\alpha\omicron\nu\upsilon\sigma\omicron\iota$, particularly, in the contemporary Georgian historiography the ethno-geographic and political history of the Armenia’s northern territories has been distorted, these Armenian areas groundlessly presenting as “south-western regions of historic Georgia” (Iberia). But, according to ancient Greek and early

medieval Armenian sources, Iberia (Virk) was situated to the north of Armenia and the border between them was along the Kur River. "Diau(e)he is deciphered as "Diau(e)he"-ian (suffix -he(-hi)- is not the ethnonym-forming, but an appurtenance indicating suffix, forming adjectives). Similarly the notion *Taikians*, mentioned in Armenian sources together with Taik' is a toponymic form of the name of the Armenian population of the province of Taik', as is seen from the mentioning of the Armenian population also under the names of other regions and districts (gavars) of Armenia: *Gugarkians*, *Mokkians*, *Sperians*, etc. Daiaeni and Diau(e)he of the cuneiform inscriptions (and identified with them Ταοῦκοί of Greek sources) are ancient mentionings of the proper Armenian province Taik'. According to the opinion of Brosset, the origin of the name «Somekhi» given to Armenians by Georgians, is connected with the Georgian word «samkhreti» (სამხრეთი), which means «south». While using the forms of the name *Somkhiti/Somkhet*, it is necessary to note that the territory situated to the south of Iberia (the southern border of which passed along the Kur River) is meant, i.e. as the territory of entire Armenia, as well as - eastern *gavars* of Armenia's northern province of Gugark.

In the third chapter – “Comments on the Van cuneiform inscriptions about ancient Armenia in the French Armenology in the light of Movses Khorenatsi's information” is devoted to the research of ancient history of Armenia in French oriental studies. The most valuable is Brosset's contribution, who on the one hand used Egyptian, Assyrian and Babylonian, and on the other hand, he studied Armenian medieval sources containing ancient data.

The significance of Movses Khorenatsi's work in discovery of the Van cuneiform inscriptions is determined by their place in the historical cultural heritage of Armenia. The comments on the country name *Armenia* and ethnic name *Armenian* given by the European and particularly French Armenologists on the basis of decipherment of the Assyrian and Van cuneiforms are an important contribution to the studies of the history of Van Kingdom (Urartu) as an essential part of the Armenian statehood's history. The attention has been also paid to the studies (since the beginning of deciphering and research of language of the Van cuneiform inscriptions) of relation of cuneiform texts language with Armenian.

In the fourth chapter – “The evaluation of Armenian civilizational factors in the works of French Armenologists” – are studied methodological approaches of French Armenologists to the biblical perception of Armenia as the Ararat land, as well as early Christian developments beginning with the Apostolic preaching and resulting in conversion to Christianity in 301 AD, pre-Mashtotsian Armenian letters and invention of the Armenian alphabet by St. Mesrop Mashtots (405 AD) as a result of which the emergence of translated (V. Langlois called the translators “Saint Translators”; La Croze called Armenian translation of the Bible “Queen of Versions”) and original Armenian literature.

It is characteristic that French travelers and missionaries during their voyages visited Armenia paying attention to ethnographic, economic and historical cultural values, especially to the sacred mountain Ararat-Masis.

The results of the research are summarized in the conclusion.